Սանասարեան Վարժարան

2004

10

2395 329-ԱՀ

# ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

## 'Ի վերայ եօթն գլխաւոր ցաւոց մր Ա.ծածնին:

Արարեալ 'ի յորդորումն բարեպաշ-տից՝ 'ի բարեաց գրոց, և յաշխարհա-կան բառ:

Տն Գաբրիէլի Աւետիքեան կոստանդնուպօլսեցւոյ Աթոռա-կալ Վ րդպտի, յաշակերտութե Տն Մխիթարայ մեծի Աբբայի:

10006-57



Տպագրեալ յամի Տն 1810. ռՃԾԹ:

'Ի ՎԵՆԵՏԻԿ:

'Ի վանս Սբյն Ղազարու:

232·931

Պեղապըսակ՝ կոյս եօթնարփի,
ցաւօք եօթամբք՝ կայ 'ի ստուճերի։
Աղերս տանի՝ Հօրըն զորդի,
սիմէոնեան՝ սրով անդ խոցի։
Բօթ դաւանաց՝ ըն Հերովդի,
զնա յեգիպտոս՝ վարէ բըռնի։
Բաքունն Յիսուս՝ յերկտասան ամի,
'ի մէր տան Հօրն՝ մօրէն ծածկի։
'Ի պարտիզին՝ մատնեալ կապի,
մայրըն 'ի սիրոյ՝ աղեօք կիզի։
Էր նա բարձօղ՝ որդւոյն խաչի,
գեր քան զսիմոն՝ կիւրենացի։
Լայ առ խաչին՝ անսփոփելի,
կից ընդ որդւոյն՝ գոչէ Էլի։
Վիմով կնքեալ՝ գանձ իւր որդի,
ինքն ընդ վիմօք՝ ցաւոց ճըմլի։

# ԲԱՆ ԱՌ ԲԱՐԵՊԱՇՏ ԸՆԹԵՐՑՕՂՍ։

Առաջին պաշտօնն՝ որով հաստա-
տեալք մեծարեն զնէ Ս. ծա-
մայրն յեշտապահութբ և նշորդութբ յասոց
նոցա, մի է 'ի ջանական աւանդեց անտի 'ի
վերջնոյ և 'ի գլխաւորաց՝ զորս յետ նե-
ռաւար փնօրհնութե եւրոյ օրհնադրեաց
ծրեէքն ։ Սամուէ յանջն առնելնդ աս-
խաչէն շեւրն փերամայր 'ի ոբն յոհնան-
նէս անուանադրութբ մօր և որդւոյ՝ ընդ
այլ որդեական պարտս 'ի նէրս ձայէր և
զինեմարելն ըստ 'ի յասս եւր, շեյորդելն
վշտաց նոցա. զի համակարէս լենել որդ-
ւոյ ընդ ծնօղս՝ օրհնս են բնութե, և ա-
ռատել ևս՝ շնորհաց ։

Սորէն վասն պաշտօնատէր հաստատացե-
լոյն սովորութե 'ի սկզբանէ և այսր մեղ
յառաջամիտ էր 'ի սոյն պաշտօն. առ որ
շատ համարեմ յեշտապահել մայն շքափա-
ռութ սէյ հօրն Պետրնի. որոյ յաջողա-
կեալ երբեմն հոգւով 'ի լեառն գողգոթա՛

սար

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԿԱՐԴԱՑՈՂԱՑ։

Այն համառօտ ջերմեռանդու-
թէր` որով քրիստոնեայք նուա-
ճէին զՍ. Ծամայրը մտածելով անոր
ցաւերը ու ցաւալից ըլլալով, Ս.տէ
ջերջէն ու գլխաւոր հրամաններուն մէկն
է` որ եթէ կենդանաբար մարդեղութե
գործքը լմնալու ժամանակը կարգադրեց
մեր փրկիչը։ Սա՛ չե խաչէն վրան յանձ-
նելը զՅովհաննէսին իւր մայրը` երէնք
մայր և որդի կանչելով, ասէր որդեակս
պարտուց հետ ալ կենացներ` որ մեծ-
թարէ շէնքը ցաւոց մէջ, ձեռայը ցաւա-
կից ըլլայ. ենչու որ որդէն մէկ սերտ մէկ
կերք ըլլալը ծնողաց հետ` բնական օրէնք
մըէ, և աւելի շնորհաց օրէնք մը։
Սաւր համար ասոր ապէնքն ՚ի վեր քրիս-
տոնեայք մեծ փոյթ ունէին ու ջերմե-
ռանդութէ. հերեք է յիշել միայն զՍ. հայր
Մեմէնի բաղչանքը, որ մէկ անգամ մը
հոգւով յափշտակեցաւ գողգոթա լեռը,

ուր տեսանէր զՏէրն 'ի խաչէն, և զմայրն
առ նմա, եղերև մերթ էր յիշոն դարձան`
ամայց առ Մերձակայան, ցանկայր յոմ ժամ
այցաց էաւ ։ (Սարք հէց, եր. 88 ։)

Բնադրում և յոժնապէտ են արդեանք այսր
բարեպաշտութեան ։ Սանդէ մատուցեալ
խոհունս և հարեհայոն յաւոյ Ս. Ծամօրն`
ունի ընդ էր անանձար շնչաւորութէ
վշտակիր անօրէնութեանց Ի՛աէ, զնորա
ցանկալի սէրն` որով յանձն առ զմ̄մ, ըղ-
ձանորութէ մեղաց և գթառաւորութէ` որք
պարաճանս եղան հարհարանաց ա̄ծորդ-
ւոյն, զմծագնութէ հոգւոց մարդկան` ո-
րոց ծրկանս շնորհ փրկանակաց զորեան ։
Յայտնապատուամ երևեցուցանէ դարձեալ
զմ̄յ առանձնէն նախասխնամութէ առ ընդ-
բեալս էր, յորոց պատաւեր հաճոյացեալս
տայ 'ի ծոցն մեծագունից վշտաց յաղ-
թարհի յայսմիկ․ ընդ նմին ներարագրէ զը-
րեակն յանձնաւութէ արդարոցն, որք ա-
խորժելով ըմպեն զքաղցն ներդութեց վ̄ա-
յ̄ց, անպարտուն հաստատուն պաշտելով
զատաքէնութէ եղերանց` քան զի նշանա-
գործութէ, համ գերաշանցութէ այլոց
պարգևաց ։

Բերդ` այսր մի ըղձական և մխիթարագ

յե

ուր փեսայ Քս̄ խօսէին հրա՝ ու մայրը հոն կեցած. երբոր ինք երէն դարձաւ նէ՝ ըսաւ քովը եղողներուն, կըբաղձայի որ

ամմէն իծէր ու մտքով կենամ:

Չափ ու կերպ կերպ պտուղ ունի այս ջերմեռանդութեան: Անիկա որ սրտանց մը-տածելը Ս. Ծածնայ ցաւերը ու ցաւակ-ցելը՝ հետը ունի մեզի Յս̄ի չարչարա-նաց յիշատակը, երեն անչափ սէրը՝ որ յանձն առաւ ամմէն վիշտ. կեմացնէ մեղաց ու դատապարտութեան ծանրութեը, որ պատ-ճառ եղաւ Յս̄ի չարչարանացը, պատ-ուհասանութեը մարդկանց հոգոյն, որ քըր-կելու համար իր արիւնը թափեց: Աս-կէ շատ յայտնի կերեւնէ ալ մանաւոր կարգաւորութեը իր սիրելեաց հրա, որ անոնցմէ առելն հաճոները մեծ մեծ վշտ-տաց մէջ կըթողջէ աշխարհքիս հրա. ու արդարներուն ալ մեծ քաջութեը կը-ցուցանէ, որ յանձ կառնեն սիրով կըհը-մէն նեղութեց գաւաթը մ̄յ համար, ու ա-ռանց տրտունջի համբերելով առելն կը-պայծառացնեն իրենց առաքինութեը, քան թէ հրաշք գործելով, կամ ուրիշ գերա-

զանց պարգեւք ունենալով:

Արդ՝ այս ամէնը սրտանց ու նոր նոր միտք

յեղապակուէ՝ շնորհօքն ա̃յ ևեթ ենթակաբար ազդէ 'ի մարդ պետարկոր ներգործութե. ա̃ծպաշտութե, զնէրն ու ա̃ծ ամենեղ-նելև, զեղջս շնորհակալութէ ու երա-տես երկրագործութեն, զապաշխա 'ի մեղաց գործելոց, զզգուշութեն յառաջիկայից, զյոյսն մշտաջան 'ի վաստակս երկնէ հոգ-ւոյ, զերկայնամիտ ծածկալութե վշտաց պատահելոց, զյոյս ապաւենութե յա̃մ 'ի խնամս փրկութեն ա̃յ : Այս ահա այսու-քիկ են՝ որովք ա̃ծպաշտութեն վարք կեր-պարանեն 'ի մեզ, և փայլացուցանեն զենեք երկնաւոր ծաղանգութեն. և որքն այս են արդեանք պտղաբերելոյ յետամնդուն մաքրութե և 'ի կարեկցութե ցաւոց սրբ-ուհւոյ Տիրամօրն. Նմին իրի զմտա-դեար պարապելոյն յայս բարեպաշտութե՝ գտանեմք նշանաւորս լինել յա̃ծպաշ-տութեան հանդէս :

Այս քանզի կերք ցաւոց Ա̃ծամօրն ոչ է-ղեն իբրև զայլոց մարտիրոսաց՝ արտաքին մարմնոյ տանջանօք, քերանօք, կարա-մամբ, այրմամբ, հարուածովք, և այլովք 'նոյնպիսեօք, այլ ծածկական ներքինք էին և մտաւորք՝ 'ի սրտին ներգործելովք, նո-վին օրինակաւ պահանջեն զմտաւոր քըն-

նու-

բերելը՝ գրելթէ ենք երկին այ շնորքով մարդուն սրտին մէջ կըգործէ հարկաւոր բաները ածպաշտութե, որք են՝ անպակաս սէր այ, շնորհակալութե փրկութե երախտեաց համար, գործած մեղքերէն զղջալը, ըլլալի մեղքերէն զգուշանալը, միշտ ջանալը հոգւոյ փրկութե գործքերուն, համբերութե դիմանալը հանդիպած վիշտերուն, յուսով ապաւինելը ամմէն բանի այ հոգացողութեան վրայ ։ Ասոնք են որոցմով քրիստոնէական վարքը կչքնանայ, ու ասոնցմով կապուի կեանքը արքայութիւնը ժառանգելու ։ Ասանկ է նէ՝ ասոնք են պտուղը որ կըլլայ ջերմեռանդաբար մտածելով ու մանանայելով սբ Ածածնայ ցաւերուն ։ Ուստի կըտեսնենք որոնք որ սրտանց այս ջերմեռանդութիւնը կըհետեւին նէ, բարեպաշտութե կողմանէ ալ նշանաւոր են ։

Բայց որովհետեւ Սբ Ածածնայ ցաւերը չէշան ուրիշ մարդերունաց պէս դրսի մարմնաւոր տանջանքով, քերածովք, կըտրտելով, այրելով, ծեծելով, և այլ այս կերպ տանջմունքով, այլ հոգւոյը ներսէն ումտքի ցաւ էր սրտին մէջ, անոր նման ալ պէտք է որ մտքով քննի, ու սրտի կսկի-

նութիւն և շնորհս յարեկցութեան ։
Ապա եղանակ հալածութեան լինելոց է
մանր և յուշելի հայեցողութե պարագայից
իւրաքանչիւր ցուոց , և նոցունց համե-
մատեալ ցուցակցութեն եղխութի ։ 'Ի սոյն
հոգևոր վարդապետացն խնամ տարեալ
դիւրութե բարեպաշտից , ո՛չ միայն դժե-
ծութե ցուոցն շանաշան գրքածոյք եռ-
ցայայտել հոգւոյն ըստ իւրաքանչիւր
հանգամանաց , այլև շնդարձակութեն
ամփոփեցին 'ի չափաւոր գլուխս , յեօթն
վերածեալ շերլեալ ցուս նր · որոց առնը-
բաժան և հատանեալ եածանութի՝ այս է ։
Առաջին · 'Ի վերայ գուշակութեն սե-
քանի ծերունւոյ՝ յորժամ ժառանորեայ
ընծայեցաւ Քս 'ի տաճարին ։
Երկրորդ · Ընդ փախուստն յեգիպ-
տոս յերեսաց հերովդէի արքայի ։
Երրորդ · Ընդ կորուստ Յի յերկոտա-
սանամեայ հասակի ։
Չորրորդ · Յորժամ Յս պատահա-
րեալ առ 'ի մահ , բարձեալ զխաչ յուս՝
ելանէր 'ի գողգոթա ։
Հինգերորդ · Յորժամ բևեռեալ խաչե
ցաւ 'ի խաչն ։
Վեցերորդ · Յորժամ աւանդեալ զհո-
գին

Ծով ըլլայ յառաջնութիւնը ։

Ասոր համար մտածելու ներքը պէտք ըլլայ եարան ու հանդարտ նայելը ամմէն մէկ յաւէ պարագաները, և անոնց համեմատ յառաջնութիւնը ընել ։ Ու հոգևոր վարդապետներն ալ կամենալով դիւրացընել ջերմեռանդներուն, ջանացին ոչ միայն ցաւերուն մեծութիւնը երենց պարագայովը մէկնել շանալան գրչով, հապա անոնց եաւմութին ալ չափաւոր թիվոյ մէջ առին, եօթը երևելի ցաւ ընտրելով. որոնց ուղղրական և ընդունելի եածանումը աս է ։

Առաջինը . Սիմէոն ծերոյն գուշակութէ վրա, երբոր Քս քառասունն օրվան ընծայվեցաւ տաճարը ։

Երկրորդը . Եգիպտոս փախչելուն վրա Հերովդէս թագաւորին ձեռքէն ։

Երրորդը . Յս կորսնցնելուն վրա տասներկու տարվան եղէն ։

Չորրորդը . Երբոր Յս դատապարտեցին, ու խաչը կռնակը կելլէր գողգոթա լեռը ։

Հինգերորդը . Երբոր բևեռած խաչվեցաւ խաչին վրա ։

Վեցերորդը . Երբոր հոգին աւանդեց,

գէն , կողն նր տէգաւ խոցեցաւ , և մար-մինն իջուցաւ 'ի խաչէն :

## Ութներորդ . Յորժամ թաղեալ ծած-կեցաւ 'ի գերեզմանի :

Ըստ այսմ եւթանանման յօրինեալ և մեր Եփրեմ ամօք յառաջ ուրոյն մտածութեան եռամասնեայ 'ի վր իւրաքանչիւր ցաւոց հանդերձ պատշաճեալ աղօթիւք՝ առա-ւելապէս 'ի շարժուցածս մերոյ անձին , յօժարեցաք այժմ պարագրել 'ի վայելուչ հասարակաց , թարգմանեալ և 'ի ռամիկ լեզու՝ դիւրիմաց ամենեւեքեանց :

Արդ՝ յայսց մտածութեանց հարօղ է իւրա-քանչիւր բարեպաշտօն ըստ իւրում վե-ճակի՝ և ըղձիցն՝ և ներելոյ ժամանակին 'ի ներ առնուլ , մանաւանդ յառաւուրս ուր-բաթու և շաբաթու , հանդարտական խոհ-մամբ վերծանել առնել յիւրաքանչիւր մա-սին , և շարժուածս հոգեւորական ըղձիցն հայցելով 'ի շնորհացն այ , և 'ի մարմնակ-բարութե նորին եւս տիրամօրն : Այս որ ո՛չ ծոյլ փոյթ նպաստաւորութեան՝ եթէ զիւրաքանչիւր ցաւոց պատշաճաւորն ջեռ-հերքեցուցէ հրեղ մտոյ ուրուք յիւրոց սիրե-լեայ՝ որդւոյ , կամ աշակերտին . այս է , մտախոհ լինիցի՝ թէ որդի իւր է՝ որ ըն-

Երս

ու կողը խոցեցին տէգով, մարմինն ալ խաչէն էջեցուցին ։

Եօթներորդը․ Երեքօր թաղուած ծածկեցաւ գերեզմանին մէջ ։

Աս բաժանմունքին վրայ մենք ալ շատ տարի առաջ շինեցէինք շատ շատ մտածուէ երեք մասով ամէն մէկ ցաւու վրա՝ երենց յարմար աղօթքով՝ աւելի մեր անձին խրատ ըլլալու համար․ հիմա կամեցանք որ տպով ամենքը օգուտը վայելեն, աշխարհաբառու ալ թարգմանելով, որ շատոնք դիւրաւ հասկընան ։

Ուրեմն աս մտածմունքներէն կրնայ ամէն ջերմեռանդ իր աստիճանին ու բաղձանքին ու ունեցած ատենին չափովը գործածել, մանաւանդ ուրբաթ ու շաբաթ օրերը, հանդարտաբար մտածելով ամէն մէկ մասը, եւ սրտին հոգւոր շարժմունքը խնդրելով Այ շնորքով, ու մէր Տիրամօրը միջնորդութե՛ ։ Աս բանիս քիչ օգնութե՛ ըլլար՝ թէ որ մարդ ամէն ցաւերուն պատճառները մտքին մէջ չխօսինէ ինչպէս թէ իր մէկ սիրելին՝ որդին կամ ազգականը քաշած ըլլար․ ըսել կուզեմ, միտքը դնէ թէ իր որդին է որ կը բռնուիկոր, կը կապուի, թուք կառնէ, արիւնլեայ կը ծեծ-

բերանն , հայր , Թքանն , որ յարեան յաղ-
նի և այգանն , որ ձեռնք դառնէ , որ ըզ-
խաղն բաւանայ և 'ի նմա հանէ , որ ղեկ-
ղին ըմպէ , Իա̅ : Մա̃ զի սոյնօրինակ մը-
տածութե̅ այլոյն ներք լինին մեր սեղ-
հական , և իբր ինաւորաբար զարթուցա-
նեն զհարիեցութեն : Բայց 'ի զարժեղ
ցաւակցութե̅ն առաւել յուզ ածել պարտ
է զերուն պարտձառս ցաւոցն , այն են
մեղք մեր , յորս մեք հեղգացաք անմտաբար,
այլ Տէրամայրն յանկարծ վշտացաւ ըստ
որդւոյ իւրում :

Փափաքեմք մեծապէս՝ և աղնուանեմք 'ի
շնորհելոյ տն̃ , թէ համառօտ մտածու-
թեքս բազում ինչ և մեծամեծս 'ի հո-
գեկան բարեաց շահեսցեն ջերմեռանդն
պաշտօնաէրք տէրամօրն : Մանզի ո՛չ
միայն ըստ նախ առաջելոցս՝ դիւրաբար
յաջողեն 'ի սիրտս նոցա ներգործութե̅ք
տծ̃պաշտութե̅ , այլև մանանեց լինին
բազմապատիկ շնորհաբաշխութե̅ց՝ որք 'ի
Հայրապետաց հռովմայ կարգեալ են 'ի
յորդորումն բարեպաշտից , սահմանեալ
և շյառուլ յեղաւուկ Յառոց 'ի վերջ̅ր̅դ
ուրբաթու աղօտհացեց :

Բ̃ առացեալ անեղիեայ է տմ̃ մայց , թէ
ծըղ-

[illegible]

[illegible]

[illegible]

Ճշմարիտ և հաստատուն բարեպաշտութեն առ ցսա ամենասուրբ տիրամօրն՝ ինքն իրաւամբք իւր սիրելէ պգնութեց մայրն ցուցանել զամ խնամս իւր առ այնպիսի բարեպաշտս. Գութ որոյ նորա ոչ կարեն հանդուրժել՝ թէ վշտանիցէ իւր և տառապանեցորդք անայցելու փայցեն ՚ի կարիս ինչ հոգւոյ, կամ մարմնոյ: Եթէ բազմադէսակ մեղօք իցեմ եւ պարտաւոր, եթէ ՚ի վիշտս տառապիցեմ հոգեկանս կմ մարմնականս, եթէ ծուլութեք զանազանք պնդեալ գայցեն, եթէ տգիտութ կամ տկարութ կամ ախտք մոլեկանք զանձինս վրանգեն, եթէ որոգայթք գաղտնիք ՚ի դիւաց կամ ՚ի մարդկանէ ինձ պատրաստեն, եթէ անյայտ կատարած հանդերձելոյն ՚ի ժամանս խորհրդոյ զիս արկանիցէ, յայսմ ամ ինչ սփոփել հոգւոյ՝ պաշտպան և ապաստարար զնա հաստատեմ գտանել, որում ՚ի վստահութ կեանս իմ եդէ ՚ի սորա կարեկարանեց:

Եղեաթար քահանայ յանցաւոր գծեալ առ արքայ սողոմոն աղաստամբութէ դատաստանաւ, առ ՚ի նմանէ ներողութեան հանդիպեցաւ այնու պատճառանօք, զի էր ասէ՝ կարկառեցար ամ ուրեք՝ ուր կարկա-

Ճշմարիտ ու հաստատուն ջերմեռանդու-
թեը Ս. Ծածնայ ցաւոց՝ գրեթէ մէկ երա-
տոունջով մը կշարժէ չմայրն գթութեց՝ որ
եր ամն հոգը ցուցանէ այնպէսն ջերմե-
ռանդեց վրայ . եր որոն գութը չէկրնար
համբերեր՝ որ իրէն ցաւակցեցները ու հե-
տը լացողները երեսն վրայ թափն հոգևոր
կամ մարմնաւոր կարօտութե մէջ : Ինէ որ
ես շատ կերպ մեղքի պարտքեան ըլլամ,
թէ որ հոգու կամ մարմնոյ վշտաց մէջ տա-
ռապեմ, թէ որ կերպ կերպ փորձութեներ
վրաս թափեն, թէ որ պէտքութեը կամ պէտ-
րութեը, կամ չար ախտերը շէս վտանգե
բերեն, թէ որ ծածուկ որոգայթ սատա-
նայէ կմ մարդու ենծէ լարվի, թէ որ վեր-
ջը անյայտ ըլլալը ինծի պշտորեամ ան-
հանգստութե պայ նէ, աս ամէնուն մէջ
հոգեւ հանգչեցնօղ՝ պաշտպանօղ ու ապա-
ւօղ կհաւատամ ունենալ ըանէկայ՝ որուն
որ ողորմելի կենացս մէջ որպանց ցաւակից
եղերեմ :

Ս. Եկեաթար ժահանան որ աղասամբութե
գործով յանցաւոր գտնուեցաւ Սողոմոն
թագաւորին դէմ, անկէց ներում առա-
ւս պատճառով, որովհետեւ ըսաց՝ սուր
տէր որ չարչարվեցաւ դաւեթ հայրս՝ դուն

աւ

չարեցաւ հայր իմ դաւիթ : ( Գ. Թագ. Բ. 26: ) Ո՞չ առաւել եւս երկնաւորն սողոմոն Յս̅ ներողամիտ լինելոյ եւ բարեխնամօղ առ այնոսիկ՝ որոց փեսաննեցէ վշտակցաց լեալ մօր եղբօր համակար որդեգրաւորութե̅ դա̅մ ժամանակս կենաց :

ալ հետը չարչարվեցար ։ Ի՞նչխապար ա-
ռէլէ հարկա երկնաւոր ողորմածը Յո՛ նէ-
րօղ ու գրած հըլլայ անոնց՝ որ հըսկեանէ
րէ իր Տօրը ցաւակէց են սրտանց եօլըք
երենց հենաց ժամանակը ։



Ես մայր Բանին՝ ազատ յերկանց ·
Մայր ձեզ եղէ՝ յերկունս անանց :

Յօղէր արտօս՝ ըր ցաւագին ,
մայր տ͞ն որ կայր՝ մերձ առխաչին.
Յորժամ լըսէր՝ ըզծարաւին ,
քարըքառւելոյ՝ իւր միածնին ։

Ն. յոօր անճառ ։

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

## ՚Ի վր̃ եօթն ցաւոց ամե-նաս̃բ Ա. ծամօրն ։

### Մտածութի̃ Առաջին ։

՚Ի վերայ ցաւոյ ամենաս̃բ կուսին ընդ արտասանելն գուշակութե̃ն ծե-րունւոյն սիմեոնի ։

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ։

ԶԻԱՐԴ ԴԱՌՆ լինին տրտմականքն՝ յորժամ ընդ ուրա-խու̃թս խառնին ։ Որակութի̃ք ներ-հականք ուժգինս մաքառին՝ յոր-ժամ միմեանց պատահեն ՚ի նմին ենթակայի ։

Այ̃ կոյսն մարիամ լի հոգևորա-կան խնդութ̃բ եկն ՚ի տաճարն՝

յըն-

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

## Սբ Ա՟ծածնայ եօթը ցա-ւոց վրայ ։

### Առաջին Մտածութիւն ։

Սբ Կուսին ցաւոց վրայ՝ որ ունեցաւ Սեմէոն ծերոյն տրտմալի գուշա-կութենէը համար ։

### ԱՌՋԻ ՄԱՍԸ ։

ԻՆՉՊԷՍ ԴԱՌՆ են տրտմական բանե-րը, երբոր ուրախու-թեան հետ կըխառնուին ։ Ներհակ որակութիւնները խիստ կըկռուին՝ երբոր մէկմէկու կըհանդիպին մէկ ենթակայի վրայ ։

Սբ կոյսն մարիամ հոգևոր խըն-դութենով լցված՝ եկաւ տաճա-

րը

յընծայումն կուսածին որդւոյն ,
'ի կատարել քառասնօրեայ աւ-
ուրց սրբութեան իւրոյ ։ Ընծայք
Հոգի նորա ընդ փառսն այ , զի
մատուցանէր Հօր՝ զորդի նորա ,
զմծն՝ այ ։ Ընծայք ընդ փառս
տաճարին , զի 'ի նմա մատչէր պա-
տարագ այնպիսի , որ լրումն էր և
վախճան և ըունօղ այլ ամենայն
պատարագաց ։ Ընծայք ընդ փա-
ռս ժողովրդեանն , զի զիւրեանց
օրէնսդիրն ընկալան ը ինքեանս
օրինակատար , և ազատարար 'ի
նոյն իսկ օրինաց ։ Ընծայք և ընդ
փառս իւր , զի իւրով սպասաւո-
րութբ գործեալ կատարէին այս
ամենայն փառաւորութիւնք յեր-
կինս և յերկրի ։

Իսկ ծերունին սիմէոն յետ կցոր-
դակից լինելոյ մեծի ցնծութե կու-
սին և սրյն յովսեփայ , որհնեաց
զնոսա զերկոսին . և դարձուցեալ
զբանն առ մայրն՝ ասէ ։ Ահա սա
կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց
'ի մէջ իսրայէլի , և 'ի նշան հակառակու-
թե ։ Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր .

րը՝ որ ընծայէ իրեն կուսածին որ-
դին, երբոր լմնցաւ քառասուն-
քը իրեն սրբութենը ։ Իրեն հոգին
կցնծար Ա․Յ փառաց վրայ, ինչու-
որ Հօր ա̃յ կմատուցանէր իւր որ-
դին, ա̃ծը՝ ա̃յ ։ Կցնծար տաճա-
րին փառացը համար, հոն մա-
տուցանելով այնպիսի պատարագ-
մը՝ որ բոլոր այլ պատարագնե-
րուն նմանն էր, ու վախճանն, ու
ընդունօղ ։ Կցնծար իսրայէլեաց-
ւոց փառաց վրայ, ինչու որ իրենց
օրէնք տվօղը ունեցան մէկ տեղ
օրէնքը պահօղ, որ պիտի ազատէր
զիրենք այն օրէնքէն ։ Կցնծար
իր փառաց վրայ ալ, որ այս ամ-
մէն փառաւորութիւնը իրմով կըկա-
տարվէր յերկինս և յերկրի ։
Այսպիսի մեծ խնդութեան մը կու-
սին և ս̃յն յովսեփայ ուրախակից
ըլլալով ծերունին սիմէոն, օրհ-
նեց երկուքն ալ․ և խօսքը դար-
ձուց մօրը ըսաց․ * Այս որդիս կե-
ցած է շատ իսրայէլացւոց գլորելու, ու-
կանգնելու, ու նշան հակառակութեան ըլ-
լալու ։ Ու քու հոգուդ ալ պիտի անցնէ

զի յայտնեսցին ՚ի բազմաց սրտից խորհուրդք։
(Ղուկ. Բ. 34։)

Ո՜վ ցաւագին դուշակութեանս. և ո՞ր աղէտ իցէ այնպէս կսկծեցուցիչ՝ որպէս պատմել խանդակաթ մօր զցաւալից անցս որդւոյն սիրելւոյ. և զայն՝ մինչդեռ յուրախութեան և ՚ի ցնծութեան է սիրտ նորա։ Ջուր ցուրտ արկանէ ՚ի մարմին ջերմացեալ, որ զցաւոց դոյժ արկանէ ՚ի սիրտ զուարճացեալ։ Ոչ կարեմ ասել թէ անժամ և անխորհուրդ էր այս դուշակութիւն. քան զի քաջ գիտեմ զծերունւոյն սրբոյ զհոգեկիրն լինել. և զի զոր օրինակ Հոգւոյն ուղղեաց զոտս նորա ՚ի տաճարն, նոյն Հոգի շարժեաց զնորա լեզուն ՚ի պատմել զցաւալիսն։ Բայց զի՞նչ իցէ, զի ունելով այլ ինչ բազում բանս խնդութեան, զնոքօք զանց արարեալ՝ միայն զտրտմականսն յիշեցուցանէ։ Ո՜վ գաղտնի խորհրդոց Հոգւոյն սրբոյ, որ զխորհրդագեղ ուրախութի իւրոյ Հարսինն՝ սայրասուր փշովք տրտմութեան խոցոտել կամե-

ցաւ

տուրը , երբոր յայտնուին շատ արդէ խոր-
հուրդներ ։

Ով, աս ինչ ցաւալի գուշակութի
է . կրնա՞յ մի ըլլար անանկ խըշ-
խըշցնող կսկիծ մէկ թալկրտող
մօր մը , ինչպէս պատմել իրեն ցա-
ւալի գալիքը իւր սիրելի որդոյն ,
ու ան ալ՝ երբոր սիրտը ուրախու-
թե և ցնծութե մէջ է ։ Պաղ ջուր
կլեցնէ տաքցած մարմնոյ վրայ՝ եր-
բոր մէկը ցաւոց բօթ կուտայ ու-
րախացած սրտի մը ։ Չեմ կրնար
ըսել՝ թէ ամէնէ դուրս ու առանց
մտածելու եղաւ աս գուշակու-
թիւնը . որովհետև աղէկ գիտեմ
որ Տր ծերը ունէր զՀոգին Տր .
և ինչպէս Հոգին Տր առաջնոր-
դեց անոր երթալ տաճարը , այն-
պէս ալ նոյն Հոգին շարժեց անոր
լեզուն որ պատմէ ցաւալի բանե-
րը ։ Բայց ո՞րն է պատճառը՝ որ
շատ ուրիշ ուրախութե խօսքեր
կեցածիքէն , զանոնք կըթողու՝
և միայն տրտմալի բաները կըյի-
շեցնէ ։ Աս գաղտուկ խորհուրդ է
հոգւոյն մէջ , որ իր հարսին վարդի

ցաւ։ Նորանի՞ թէ և մեզ պար-գևէր զխայթուած փշոցս զգալ 'ի սրտի։

## ՄԱՍՆ· Բ։

Մի՛ կարծեր ո՛վ հաւատացեալ, թէ չգիտէր կոյսն սուրբ զոր ինչ անցք անցանելոց էին ընդ որդին իւր միակ։ Ապաքէն թէ մարգա-րէից շնորհեցաւ ծանօթութ̃ի այսա-ցիկ, առաւել ևս Թագուհւոյ նշ̃ մէջ կուսին շնորհեց̃ էր։ Իսկ արդ` եթէ գիտէր, առ ի՞նչ դարձեալ լսել զնոյնս 'ի սիմէոնէ։ Կամեցաւ ա̃ծ, զի մանկանն ծնելոյ 'ի ցաւս` ցաւագին մայր պատրաստեսցի, և ընդ անուշակ կաթինն` զդառ-նութ̃ի ցաւոց դիեցուսցէ նմ̃։ Դի-տել զվիշտս սիրելւոյն` մի վէրք էն. իսկ և յայլմէ լսել զնոյնս` այս կրկին է։

Ո՞վ, զիա՛րդ կարեւէր խոցեցաւ կոյսն մարիամ, 'ի լսել` թէ որ-դի իւր` որ եկեալն էր կանգնել զյարկն

նման ուրախութիւնը ուզեց խոցոտել տրտմութեան փշերով ։ Երնէ՞կ էր որ մեզի ալ պարգեւէր սրտանց զգայլինք այն փշերուն խայթուածքը ։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ։

Մի՛ կարծեր ո՞վ քրիստոնեայ՝ թէ Տր. կոյսը չէր գիտեր ի՛նչ դար պիտի գար իւր մէկհատիկ որդոյն վրայ ։ Թէ որ մարգարէներուն շնորհեց Ած այս բաներուս տեղեկութիւնը, ալ աւելի շնորհած էր Տր. կուսին՝ որ անոնց թագուհին էր ։ Հապա երբոր գիտէրնէ, ինչո՞ւ նորանց կըլսէ զանոնք 'ի սիմէոնէն ։ Ա՛յս կամքն էր՝ որ չարչարվելու համար ծնած տղուն մայրն ալ ցաւակից ըլլայ, եւ անուշիկ կաթին հետ խմցընէ իրեն լեղի ցաւեր ։ Սիրական մարդու վիշտը գիտնալը՝ մէկ վէրք մի է. բայց ուրիշմէն ալ լսելը զան՝ երկու վէրք կըլլայ ։

Ո՞վ թէ ի՛նչպէս սաստիկ խոցեցաւ կոյսն մարիամ, լսելով թէ իւր որդին որ եկերէր կանգնե-

զյարկն Դաւթի զանկեալն և ըզ-
կործանեալն, (գործ. ժե. 16:)
լինելոց է 'ի գլորումն և 'ի կործա-
նումն՝ ոչ սակաւուց ումանց, այլ
բազմաց. ոչ օտարաց և անծանօ-
թից, այլ եղելոցն յիսրայէլէ, և
'ի մէջ իսրայէլի: Այն որ եկեալն
էր լինել հաշտութե՟ միջնորդ և
աւետարանիչ խաղաղութե՟, լինիցի
'ի նշան հակառակութե՟:

Ով որդեակ քաղցրիկ՝ ասէր, որ-
դեակ իմ միակ. դու նշան և կնիք
խնկութե՟ հօր՝ լինիցիս նշան հակա-
ռակութե՟ հրէից, յորժամ զքեզ օ-
տար 'ի հօրէ և յափշտակիչ ա՟ծու-
թե՟ն համբաւեսցեն: Դու նշան
ախտի հարցն աւետեաց՝ լինիցիս
նշան հակառակութե՟ դպրաց, յոր-
ժամ հակառակ հարցն՝ և օրէ-
նացն քակտիչ զքեզ բամբասես-
ցեն: Դու նշան ազատութե՟ 'ի
թշնամեաց մբ՟ եսայեայ՝ (է. 14:)
լինիցիս նշան հակառակութե՟ իշ-
խանաց, յորժամ դատեսցիս ազ-
գի և քաղաքի և տաճարի աւեր-
մանն լինել պատճառ: Դու նշ-

շան

ցընել դաւթի ընկած կործանած
տունը, պիտի ըլլայ առիթ գըլ-
լորելու և կործանելու՝ չէ՛ թէ
մէկ քանի հոգւոյ, այլ շատոնց. ոչ
թէ օտար և անծանօթ մարդ-
կանց, հապա իսրայէլացւոց, և
անոնց մէջ եղածներուն : Ան որ է
կերէր միջնորդ ըլլալու հաշտու-
թեան, և քարոզող խաղաղութեան, պի-
տի ըլլայ նշան հակառակութեան :

Ով անուշիկ զաւակըս՝ կըսէր, իմ
մէկհատիկ որդիս. դու՛ որ հօր ա̄յ
բնութենը նշան և կնիք ես, պիտի
ըլլաս նշան հակառակութեան հրէա-
ներուն, երբոր զքեզ հօրաստուծ-
մէ օտար պիտի քարոզեն, ու ա̄ծու-
թեան պատիւը յափշտակող : Դու՛
որ նշան ես նահապետաց ուխտին
և խոստմանցը, ըլլաս պիտի նշան
հակառակութեան դպիրներուն, երբ
որ զքեզ պիտի բամբասեն նա-
հապետաց ներհակ և օրէնքը քա-
կող : Դու՛ որ նշան ես ազատելու
թշնամիներէն, ինչ պէս որ կըսէ
եսայի, պիտի ըլլաս նշան հակա-
ռակութեան իշխաններուն, երբոր

շան ճշմարտութեան հաւատոյ՝ լինիցիս նշան հակառակութեան հերեսիովտայց, յորժամ զառ 'ի քեզ հաւատոյն ստաբանութիւն հայհոյեսցեն : Դու նշան անախտ սիրոյ կնքեալ 'ի վերայ սրտի՝ լինիցիս նշան հակառակութեան չարայ քրիստոնէից, յորժամ ատելութիւն մեղաց 'ի սրտից իւրեանց զքեզ հալածեսցեն :

Ով սիմէոն, դու ասես՝ թէ ընդ քո անձն անցցէ սուր . և սակայն այդ քո բանդ եղեալ սուր, այժմէն իսկ ոչ միով՝ այլ բազում սուսերօք սիրտ իմ հարկանի . զի ըստ թուոյ բառից գուշակութեդ՝ այնչափ է և թիւ սուսերաց յանձըն իմ մխելոց, թէ ոչ առաւել ևս՝ ըստ բազմութեան հակառակութեանցն :

պիտի դատեն զքեզ իբրև պատ-
ճառ աւրելու իրենց ազգին ու քա-
ղաքին ու տաճարին ։ Դու որ նը-
շան ես ճշմարիտ հաւատքի , պի-
տի նշան ըլլաս հակառակուե̄ հե-
րետիկոսներուն , երբոր քու հա-
ւատքդ պիտի հայհոյեն սուտու-
մուտ խօսքերով ։ Դու որ նշան ես
մաքուր սիրոյ տպված սրտի վրայ ,
չար քրիստոնէից նշան պիտի ըլ-
լաս հակառակութե̄ , երբոր մեղ-
քով ատելով զքեզ իրենց սրտէն
պիտի հալածեն ։

Ով սիմէոն , դուն կրսես թէ քու
հոգոյդ սուր պիտի մտնէ · բայց
այդ քու խօսքը եղաւ ինծի սուր ,
և հիմիկուց սիրտըս կըխոցվի չէ
թէ մէկ՝ այլ շատ սրերով · վ̄ զի
քանի՛ բառ որ կայ գուշակութե̄դ
մէջը , այնքան սրեր իմ սիրտըս
մխված է , մանաւանդ շատ աւե-
լի՝ ինչխրտար հակառակութիւնները
որ պիտի ըլլան ։

# ՄԱՍՆ · Դ ։

Ծերունին Սիմէոն երկու ինչ երեւեցոյց ՚ի բանս իւր, յորոց զառաջնոյն խորհուրդ ոչ իմանամ, և յերկրորդէն սիրտ իմ դեղանի ։ Օրհնեալ նախ զծնօղսն զերկուսին, զայդ նմին յաւել և զգուշակութին սգաւոր ։ Եւ ո՞րպիսի իցէ օրհնութիւն, յոր յարէին բանք՝ սրտի վիրաւորիչք ․ զի՞նչ միաբանութ՟ի իցէ բարեմաղթութ՟ե ընդ բանս եղերերգութ՟ե ։

Այլ ՚ի միտ առցուք զերկրորդն ․ զօրհնութի՟ն՝ երկոցունց հաւասար բաշխեաց, իսկ զտրտմութ՟ե բանսն միայն առ Մարիամ բարբառեցաւ ․ յայտ արարեալ թէ Մարիամ միայն է ճշմարիտ ծնօղ մանկանն ընծայելոյ, ուստի և նա յաւէտ վշտակիր չարչարանաց որդւոյն ․ և եցոյց եւս ծածկապէս, թէ նա միայն լինելոց է ականատես և համակարիք յետին աղէտալից անցից որդւոյն ։ Ահա այս վիճակ

ել

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ։

Ծերունին սիմէոն երկու բան ցըցուց իրեն խօսքերով , որոնց առջինին խելքըս չիհասնիր , ու երկրորդէն սիրտըս կըտորորի ։ Ան առաջ օրհնեց երկու ծնողքն ալ , ու հէմէն վրա բերաւ տրտմալի գուշակութիւնը ։ Աս ընտիրը օրհնութիւն է որ սիրտ վիրաւորող խօսքերով խառնըված է . բարիք խընդրել՝ ու հետը լալու կոծելու խօսք կպցընել ինչ յարմարութիւն ունի ։ Մտածենք երկրորդն ալ ։ Օրհնութիւնը երկուքին միակերպ տրուաւ . իսկ տրտմութեան խօսքերը միայն մէր կուսին զրուցեց ։ Իմացուց ասով թէ ընծայած տղուն բուն ծնողը՝ միայն Մարիամն է , ուստի ան պիտի աւելի քաշէ որդւոյն չարչարանաց կսկիծը ։ Աս ալ հասկըցուց ծածկապէս՝ թէ ինքը միայն աչքով պիտի տեսնէ և վշտակից ըլլայ որդւոյն վերջի ցաւերուն ։ Ահա աս եղաւ տիրամօր վիճակը , որ օրհնութեր ընկեր ու-

եւ մօրն իմոյ. յօրհնութենէն ունել
իւր կցորդ, իսկ 'ի վիշտսն չունել
զոք ընկեր՝ բայց զորդին միայն ։
Ո՞վ ընկերութեան՝ որ դառն է քան
զամենայն միայնութի ։

Արդ՝ 'ի խորհել զայսոսիկ հան-
գամանս գուշակութեն՝ զիա՞րդ ար-
դեօք 'ի հոգի խոցեցաւ կոյսն մր.
այժմ նուա՛զ թուի ինձ զոր յա-
ռաջն ասացի, թէ վարդագեղ ու-
րախութի նր փշովք տրտմութե
խոցեցաւ. այլ աւելի կարծեմ,
թէ բնաւ իսկ 'ի փուշս տրտմութե
փոխարկեցաւ ։ Մանաւանդ զի
որ ցնծայր ընդ փառս իմոյ, լսէր
զբազմաց գովութն՝ յանարգութի
փառացն իմոյ. որ ցնծայր ընդ փառս
ժողովրդեանն, լսէր զնոցունց իսկ
հակառակել առ օրէնս շնորհաց.
որ ցնծայր ընդ փառս տաճարին,
իմանայր զիւրոյ որդւոյն անպարտ
զենումն 'ի պաշտօնէից տաճարին ։
Վասն այսորիկ ցնծութիք եկն 'ի
տաճարն, այլ մեկնեցաւ անտի
վիրաւոր, ընկալեալ յանձն զվէր
հանրականն՝ զբովանդակիչն ամե-

նայն

նենայ ; բայց վշտաց ուրիշ ընկեր չունենայ բաց իրեն որդունմէն · ընկերութի՟ մը որ քան զամէն մինակութի՟ աւելի դառն է ։

Արդ՝ երբոր կմտածէր ո՟ր կոյսը աս պարագաները սիմէոնին դուշակութե՟ը, ի՞նչ խոցեր արդեօք ունեցաւ սրտին մէջ · հիմա քիչ կերեւնայ առջի ըսածս՝ թէ իրեն վարդի նման ուրախութի՟ը տրտմութե՟ փշով խոցվեցաւ · հապա ըսելու է թէ բոլոր տրտմութե՟ փուշ դարձաւ ։ Մանաւանդ ինքն որ կցնծար ա՟յ փառաց վրա, կըլսէր որ շատոնք պիտի կործանին՝ անարգութի՟ տալով ա՟յ փառացը · ինքն որ կցնծար ժողովրդեան փառաց վրա, կլսէր անոնց հակառակիլը շնորհաց օրէնքին · ինքն որ կցնծար տաճարին փառաց վրա, կիմանար որ տաճարին պաշտօնեաները պիտի անիրաւաբար ըսպաննեն իրեն որդին ։ Ասոնց համար իրաւ որ ուրախութե՟ եկաւ տաճարը, բայց վիրաւորած գնաց անկից, առնելով իրեն հոգոյն

մէկ

նայն ապագայ վիրաց իւրոց ։

## Աղօթք ։

Ո՜վ ամենամեծ տիրամայր, ո՜վ անբիծ քահանայուհի, որ ընծայեցեր 'ի տաճարն զքահանայապետըն անարատ. տեսանեմ զմուտն քո՝ զի երևեցար իբրև զառաւօտ, գեղեցիկ ո͞չ զլուսին. այլ աւա՜ղ, զի՜արդ մեկնեցար անտի մթագին ։ Օ որդին ա͞յ՝ Հօրն ընծայեցեր, և 'ի Հոգւոյն ա͞յ ցաւոց գոյժ լուա՛ր. եկիր դու յանդիման առնել տ͞ն զբժիշկն Հոգւոց, և 'ի Հոգի քո վէրս ընկալար ։ Ո՜վ նորաՀրաշ Հատուցմանս՝ որ քեզն փոխատրեցաւ կոյս ամենօրՀնեալ. արդարև այս մի է 'ի մեծամեծաց գործոցն ա͞յ, զորս 'ի քեզ եցոյց կամք ա͞ծութ͞են ։

Եւ այժմ սիրտ իմ 'ի ծփանս է, և կրէ տագնապ յերկուց կողմանց. վասն զի ցնծութ͞ի քո Հրճուիրէ զիս յիւր կցորդութ͞ի. այլ տրտմութ͞ի քո առաւել ևս բըռնա-

մէկ ընդհանրական վերք մը՝ որ ամմէն եօթի ըլլալիք վերքերը մէկտեղէց ։

## Աղօթք ։

Ով ամենամաքուր տիրամայր , ով մեզ քուր պատարագօղ , որ ընծայեցիր տաճարին մէջ անարատ քահանայապետը ․ կըտեմնեմ քու միտնելդ՝ որ առաւօտու պէս երեցար , լուսնի պէս գեղեցիկ ․ բայց վաղը որ մթնցած ելլար անկէ ։ ԱԾորդին իր հօրը ընծայեցիր , ու հոգւոյն սրբոյմէն ցաւոց բօթ լսեցիր ․ եկար որ ոյ մատուցանես հոգւոց բժիշկը , ու քու հոգւոյդ վերք վաստըկեցար ։ Աս ինչ նոր հատուցմունք է՝ որ քեզի եղաւ ով ամենօրհնեալ կոյս ․ իրաւ որ աս ալ մէկն է այն մեծամեծ բաներուն՝ որ քու վրաստ ցրցուց ոյ կամքը ։

Հիմա իմ սիրտըս ծփման մէջ է , ու երկու դիաց նեղուն կը քաշէ ․ վասն զի քու ցնծութիդ կքաշէ զիս որ ուրախակից ըլլամ․ բայց տրտ-

մու

նանայ 'ի վե՛ր իմ, և կամի գլխո-վին տիրել սրտի իմում, ո՛չ տի-րեաց սրտի քո ։ Այլ ես ո՛վ մայր ցաւագին՝ փափագեմ լծորդել զսիրտ իմ ընդ քումդ սրտի. արա՛ ընդ սա ո՛չ քեզ հաճոյ թուեսցի. եթէ կամիս ցնծութե՛ լնուլ ըզ-սա, այդմ չեմ արժանի. իսկ ե-թէ թախծութե՛, այդմ պարտա-պան եմ. զի մեղայ որդւոյ քում, և քեզ. և զնշանն փրկութե՛՝ ինձ հակառակութե՛ նշան կանգնեցի ։ Վասն որոյ աղաչեմ, տո՛ւր անցա-ւին զտրտմութի, և հա՛ր զսիրտս զայս սրով ցաւոց քոց. զի երևես-ցի 'ի նմա կնիք ճշմարիտ որդիու-թեան քո ։

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Բ։

'Ի վերայ ցաւոց ամենա՛բ կուսին ընդ փախուստն յԵգիպտոս ։

### ՄԱՍՆ. Ա։

Որդին ա՛յ մարդ եղև 'ի կուսէն առ 'ի տալ կեանս մարդկան. և ահա անդէն 'ի ծնանելն՝ դարա-

նին

մութիդ աւելի ուժ կրնէ վրաս , ու տիրել կուզէ սրտիս՝ ինչպէս տիրեց քու սրտիդ ։ Բայց ես ո՜վ ցաւագին մայր՝ կըփափաքիմ միացընել իմ սիրտս քու սրտիդ հետ. ըրէ՛ ասոր ինչպէս որ քու կամքդ է. թէ որ ուզես խնդութ՟բ լեցընել, ասոր արժանի չեմ. հապա թէ տրտմութ՟բ լեցընէսնէ , ասոր պարտըկան եմ. ինչու որ մեղանչեցի քու որդւոյդ ու քեզի ալ. ու փրկութե՟ն նշանը ինծի հակառակութե՟ն նշան ըրի։ Սուտի կը խնդրեմ տուր պինտ սրտիս տրտմութի՟, և խոցէ՛ սրով քու ցաւոցը , որ երևնայ վրան նշանը քու Ճշմա- ըլլա որդիութե՟ն ։

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Բ։

Մէ հատին ցաւոցը վրայ՝ որ ունեցաւ Եգիպտոս փախչելու պատճառով։

### ԱՌՋԻ ՄԱՍԸ։

Որդին ա՟յ մարդ եղաւ ո՟ր կուսէն՝ որ մարդկանց կեանք տայ. մէկմալ դեռ նոր ծնած էր

քէն՝

նին մարդիկ 'ի բառնալ զկեանս
նր ։ Իսկ այն՝ որ կարօղն էր միով
հրեշտակաւ զզարմանակալսն զա-
մենայն մահու սատակել, հրեշ-
տակին յայտնութեամբ յեգիպ-
տոս զանձն ապրեցուցանէ ։ Ո՞վ
կրկին զարմանալեացս. չգիտեմ
է որ առաւել զարմացայց, է յե-
տին ապիրատութի որդւոյ մարդ-
կան, թէ է ծայրագոյն զիջումն
որդւոյն այ ։ Օ իա՛րդ աւաղելի է
խորհուրդ մարդկան. և զիա՛րդ
երկրպագելի խորհուրդն այ. և
զիա՛րդ ցաւալի խորհուրդ որ կու-
սին՝ իբրև գիտաց զխորհուրդ ըս-
պանութե նորածին որդւոյն, և
զհարկ փախստեանն յեգիպտոս ։
Օ մտաւ ածէր 'ի վերս սրտի իւ-
րոյ, և տեսանէր՝ զի ցայնվայր ու-
նայնացաւ ած առ յիւրմէ մարմ-
նանալոյն, մինչ փախչել 'ի մար-
դոյ յերկիր հեռաւոր. փախչի՝ զի
մի յայտնեսցի, զի մի մատնեսցի,
զի մի ըմբռնեսցի, զի մի սպան-
ցի. և այնպէս առաւել 'ի վտանգի
կային կեանքն՝ զոր ետ որդւոյն
այ,

քէն՝ մարդիկ ետևէն կըյնին որ ա-
նոր կեանքը վերցնեն ։ Անիկէ որ
կրնար մէկ հրեշտակով մը ամմէն
թշնամիները սատկեցնել , հրեշ-
տակի ձեռօք իմաց տալով զինքը
եգիպտոս կապրեցընէ ։ Ահա եր-
կու զարմանալու բան , չեմ գի-
տեր որո՞ւն վրա աւելի զարմանամ ,
ա՛րդեօք մարդկանց յետին չարու-
թեր վրա՞ , թէ որդւոյն այ այն-
չափ խոնարհելուն վրա ։ Ի՞նչ խը-
տար ողբալի է մարդկանց մտա-
ծութիւնը , ի՞նչ խըտար երկրպա-
գելու է այ գաղտնիքը , ու ի՞նչ
խտար ցաւալի էր մտմտուքը մը-
կուսին , երբոր իմացաւ որ մինք
ունին մարդիկ մեռցնել իրեն նո-
րածին որդին , ու անոր համար
հարկ էր եգիպտոս փախչիլ ։ Կը-
մտածէր վիրաւորած սրտով , կը-
տեսնէր որ այնքան ցածցաւ ած
իրմէն մարմին առնելով , որ պէտք
էր փախչի մարդկանցմէ հեռու
երկիր ․ փախչի որ չիմացուի , ձեռք
չըյնի , չիբռնուի , չսպանուի ․ ա-
նանկ որ աւելի վտանգի մէջ էր
այն

ոյ, քան զկեանս այնոցիկ՝ որք
արժանի էին մահու։

## ՄԱՍՆ. Բ։

Եթէ ցանկաս զչափ այսր ցաւոց
կուսին քննել, 'ի միտ առ նախ
զհանգամանս փախստեանն։ Տե՛ս
ուստի՛ փախչի. ո՛ւր փախչի. զի՛
ա՛րդ փախչի, և ե՛րբ փախչի։
Փախչի՛ 'ի հայրենեացն իւրոց, յազ-
գատոհմէ և 'ի տանէ. յերկրէն՝
ուր նահապետքն՝ որք ցանկային
և 'ի մեռանելումն իւրեանց անդ լի-
նել. իսկ ինքն և կենդանութեա՟մբ ըս-
տիպի օտարանալ անտի։ 'Ի տա-
ճարէն ա՟յ, որ էր նմա միայն տե-
ղի հաճութե՟ն, և վայելչութե՟ն տան
հօր իւրոյ։
Փախչի յեգիպտոս՝ յերկիր օտար
և բացական. ուր ո՛չ ոք էր նմա
ծանօթ՝ բայց միայն փեսայն իւր
և որդին. և չէր ոք նմին մերձա-
ւոր՝ բայց աղքատութի՟ն ևեթ։ Սուր
բնակելոց էր կոյան մաքուր 'ի մէջ
պղծոց

այն կեանքը՝ որ տուերէր որդւոյն
այ , քան զանոնց կեանքը՝ որոնք
որ մահուան արժանի էին ։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ։

Թէ որ կբաղձաս փնտրուել որ-
քանութիւը աս ցաւուս որ կուսին ,
առաջ միտք առ փախչելուն պա-
րագաները ։ Նայէ ուսկէ կփախ-
չի , ուր կփախչի , ինչպէս կփախ-
չի , և երբ կփախչի ։

Կըփախչի իւր հայրենիքէն , ազ-
գականներէն , և տընէն ան երկ-
րէն կփախչի՝ ուր որ նահապետքը
կբաղձային մեռած իքէն ալ հոն
գտնուիլ · իսկ ինքը ողջ առողջ
պէտք եղաւ որ հեռանայ անկից ·
կփախչի այ տաճարէն · որ ան էր
իրեն սիրած տեղը , ու պարծանքն
էր իրեն հօրը տանը ։

Կըփախչի եգիպտոս՝ օտար ու հե-
ռու երկիր , ուր չիկար հիչ մէկ
ճանչւոր մը՝ բաց իւր երիկէն ու
զաւակէն · և իրեն մօտաւոր հիչ
ալ ուրիշ բան չիկար՝ միայն աղքա-
տութիւը ։ Աւր որ մաքուր կոյսը
պի-

պղծոց եւ անօրինաց . ա͞ծամայրն
՚ի մէջ անա͞ծից . թագաւորազնն
՚ի մէջ բարբարոսաց . ո՞վ զիա՛րդ
տառապէիր եւ մաշէր ա͞ծընկալ հո-
գին՝ ՚ի տեսանել եւ ՚ի լսել զնոցա
զանօրէն գնացս ։

Փախչի անակնկալ երկիւղիւ, չու-
նելով յառաջագոյն կասկած ինչ
վտանգի, այլ մանաւանդ զյոյս
եկաւորուե՜ ՚ի պաշտել եւ յերկիր-
պագանել . փախչի անդադար եր-
կիւղիւ, թէ գուցէ ՚ի յայտ եկե͞լ
փախստեանն, ընդ ճանապարհն
կամ յեգիպտոս հասցէ առ նոսա
ձեռն խնդրողաց ։ Փախչի անպա-
տրաստ ամենեւին, չունելով ինչ
պաշար՝ բայց զկաթն ՚ի ստինս առ
՚ի պահել զկեանս որդւոյն ։ Փախ-
չի ը͞ ճանապարհ բազմօրեայ, ուր
աշխատութ͞ի ՚ի գնացս, անձկութ͞ի
ձմերային եղանակի, նուաղութ͞ի
կերակրոյ եւ ըմպելւոյ, եւ միայն ա-
ռատութիւն արտասուաց առ ՚ի
զսիրտն զովացուցանելոյ ։

Փախչի ՚ի գիշերի, յորժամ այլք
՚ի քուն հանգչէին . յորժամ աշ-

խարհ

պիտի բնակէր պիղծ և անօրէն մարդկանց մէջ, ա̃ծամայրը անա̃ծներու մէջ, թագաւորի զաւակը բարբարոսներու մէջ։ Որդեօք ընտիր տառապելով կըմաշվէր իրեն ա̃ծաբնակ հոգին՝ տեսնելով ու լսելով անոնց անօրէն գործքը։ Կըփախչի յանկարծ սրտադողով, առաջուց հէչ կասկած չունենալով մէկ վտանգի մը, մանաւանդ յոյս ունենալով թէ գան պատուէն ու երկրպագութիւն տան։ Կըփախչի անդադար վախով, որ չըլլայ թէ իրենց փախչիլը իմացվելով, փնտռողներուն ձեռքը հանի իրենց ճամբան, կ՚իմ Եգիպտոս։ Կըփախչի առանց պատրաստուէ, չունենալով ճամբու պաշար՝ բայց միայն իրեն կաթը՝ որ անով որդոյն կեանքը պահէ։ Կըփախչի շատ օրվան ճամբայ, ուր որ աշխատանք կար քալելու, վիշտ ձմռան եղանակին, պակսութիւն կերակրի ու ջրի, և միայն առատ արցունք կար իրեն սիրտը պաղշտկելու։ Կըփախչի գիշերանց՝ երբոր ու-

րիշ-

խարհ ամենայն յանհոգս էր , և ինքն միայն 'ի վարանս · յորժամ առաջնորդ ոչ ոք էր նմա՝ բայց միայն խաւար գիշերին ։ Գիտեմք՝ զի այս ա̅մ ծանր է և դժուարակիր նաև վայրագասուն մարդոց · ապա որչափ ևս ընդասուն կուսին ։

## ՄԱՍՆ · Գ ։

'Ի միտ առ ո՞վ անձն իմ զևս մեծամեծ հանգամանս այսր ցաւոց, որ 'ի վեր են քան զհասողութի մտաց յիմանալ, և քան զընդարձակութի կամաց 'ի ցաւիլ ։ Տրտմալից խորհուրդք սէյ կուսին յորդւոյն սկսանէին , և 'ի նոյն անդրէն դառնային · զմտաւ ածեալ թէ ո՞վ է հալածեալն , յումմէ՞ հալածի , և ընդէ՞ր հալածի ։ Նա ինքն երկնից թագաւորն՝ որ 'ի բնէ ունի զթագաւորելն , որ և նովաւ թագաւորք թագաւորեն ,

հա

րիշները հանգիստ կը քնանային ․ երբոր բոլոր աշխարք անհոգ կե-ցերէր, և միայն ինքը մտմտուքի մէջ էր ․ երբոր ուրիշ Ճամբա ցըց-նող չունէր՝ բայց միայն գիշերվան մութը ։ Գիտենք որ աս ամմէնը կոպիտ վայրենի մարդկանց ալ ծանր կուգայ ու դժար տանելու ․ հապա ո՞ւր մնաց տունը մնած փա-փուկ կուսին ։

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ ։

Միտք ալ ո՛վ անձն իմ, եղելօք մեծ պարագաները աս ցաւուս, որ խելք հասցնել իմանալը կարե-լի չէ, ու սիրտն ալ բաւական չէ՛ ցաւելու ։ Տրտմալի մտածմուն-քը ՚որ կուսին իր որդունմէ կըս-կսէին, ու նորէն որդուն վրա կը-դառնային, մտածելով թէ ո՞վ է հալածվողը, ուսկի՞ կհալածվի, ու ինչո՞ւ կհալածվի ։

Ան երկնից թագաւորը՝ որ իրմէն ունի թագաւորելը, ու անով ու-րիշ թագաւորներ կթագաւորեն, կհալածվի սուտ ու ցածաղգի թա-

Հալածի՛ ’ի սուտանուն և յանտոհ-
միկ Թագաւորէ. Հալածի՛ զի մի՛
յափշտակեսցէ զերկրաւոր Թա-
գաւորութիւնն, այն՝ որ եկեալն
էր պարգևել մարդկան զերկնա-
ւորն. Հալածի՛ զի անկասկած Թա-
գաւորեսցէ մարդ, և պականեսս-
ցէ ’ի Թագաւորութե՟ ա՟ծ :

Ո՞վ անհնարին աղէտիցս. իբրև
զչարութի՟ն իմ՟ն եղև մարդոյ Ե՟ խո-
նարհումն որդւոյն Ա՟յ, և որպէս
Թէ ասել. փոխանակ զի էջ յերկ-
նից, և յերկրի տեղի մի՛ տացուք
նմա. փոխանակ զի խոնարհեցաւ
յաԹոռոյն, մի՛ առնուցու հան-
գիստ և ’ի պատուանդանի ոտից
իւրոց : Մ՝արդ եղև, այլ սուրն
փորձեցէ զմարմնոյն Ճշմարտու-
Թի. ապա Թէ ան մարմին Ճշմա-
րիտ, փախիցէ զի մի՛ մեռցի :

Օ՜այդ ո՟ն հատուցանէք որդիք
մարդկան մոլորեա՛լքդ սրտիւք,
հեռացեա՛լքդ յամենայն արդա-
րութե :

Ւյր՝ տրիտուր այսպիսի հատու-
ցանէ նմա փոխան մեծամեծ բարե-
րա-

դաւորէն . կհալածվի որ չյափշտակէ երկրաւոր թագաւորութիւնը , ա՛ն որ եկերէր երկնաւորը պարգևել մարդկանց . կհալածվի որ մարդը անվախ թագաւորէ , ու ա՛ծ մէկդի մնայ իրեն թագաւորութէն :

Ա՛ս ի՞նչ չափէ դուրս կսկծալուքան է . կերեւնայ թէ մարդը դժուարեցաւ որդուն ա՛յ խոնարհելուն վրա , ու ըսել կուզէր թէ որովհետև իջաւ երկնքէն , երկրի վրա ալ իրեն տեղ չիտանք . աթոռէն վար իջաւ նէ , թող ոտից պատուանդանին վրա ալ հանգիստ չիգտնէ . մարդ եղաւ նէ , սուրը կփորձէ մարմնոյն Ճշմարիտ ըլլալը . հապա թէ որ Ճշմարիտ մարմին առերէ նէ , թող փախչի որ չիմեռնի :

Ա՛ս հատուցումը կընէք ա՛յ ո՛վ մարդիկք սրտով ծռած , ամմէն արդարութէ օտարացած : Ա՛ հա՛ , աս եղաւ հատուցումը մեծամեծ բարերարութեց որ իսրայէլացւոց ըրերէր : Վասն զի անոնք եգիպտոսէ

բարութեանցն՝ զոր արարեալ էր Աստուած իսրայէլ: Սման զի յեգիպտոսէ եհան ազատեաց զնոսա, և վասն նոցա այժմ յեգիպտոս տարագրի. 'ի գիշերի եհան, և 'ի գիշերի հալածի. իբրև որդւոյ անդրանկի պաշտպանեաց նոցա, և անդրանիկն նմա արարածոց խնդրի առ 'ի մահ. սեամբ ամպոյ առաջնորդեաց նոցա, արդ թեթև ամպով փախչի յեգիպտոս. վանեաց զթագաւորս առաջի նոցա, և 'ի թագաւորէն մահ նիւթի նմա. և որ ժառանգեցոյցն նոցա զերկիր թշնամեացն, չգտանէ 'ի միջի նոցա և ոչ քայլ մի ոտին, և ոչ վէմ ապաստանի:

Իսկ արդ՝ ո՞վ բաւական իցէ բովանդակել բանիւ կամ մտօք զդառնութիւն ցաւոց ամենայնք կուսին 'ի խորհել նորա զայս նմա: Արդարև նա եղև ամպ թեթև, յոր նստեալ փախչէր արեգակն արդարութեան. թեթև էր երկրաքարշ կրից, այլ ծանրացեալ յոյժ յորդութեամբ արտասուաց. և եթէ ձեռագործքն եգիպտոսի փախստեան նորա ոչ հանդուր-

հանեց ազատեց , ու անոնց պատ-
ճառով հիմայ Եգիպտոս կհալած-
վի • գիշեր ատեն հանեց , ու ինք
ալ գիշերը կհալածվի • ընտոր առ-
ջինեկ զաւկի պէս տէր կեցաւ ա-
նոնց , ու ինքն որ ամմէն ստեղծ-
ուածոց առջինեկն է՝ սպանվելու
եղերէ • ամպէ սիւնով ճամբա
ցըցուց անոնց , հիմա թէթև ամ-
պով Եգիպտոս կփախչի • թագա-
ւորներ անոնց առջևէն կորուց ,
ու հերովդէս թագաւորը իրեն
մահ կփնտռէ • ու ինք որ ժառան-
գեցուց անոնց թշնամեաց երկիրը,
չիգտներ կոր իրենց մէջ ոտք դնե-
լու տեղ մը , կմ՛ պահվելու ծակ մը:
Հիմա ո՞վ կընայ խօսքով կմ՛ խել-
քով պարտըկել՝ որ կուսին ցաւոց
դառնութիւնը՝ երբոր աս ամմէնը
կմտմտար : Նրաւցընէ ինքը եղաւ
թեթև ամպ մը՝ որու վրա նստած
կփախչէր արդարութե արևը քս •
թեթև էր երկրաւոր ախտից կող-
մանէ , բայց շատ ծանրցած առատ
արցունքով • և թէ որ Եգիպտոսի
կուռքերը չիկրցան դիմանալ քօի

դուրժեցին, ապա աղիք մօրն զիա՞րդ կիզեալ խորովեցին ։

## Աղօթք ։

Ով ամենասուրբ մա՛յր ցաւագին, ով աղբիւր ցաւոց և տրտմութեան․ զիա՞րդ տեսանեմ զլուսինդ իմանալի ընդ ճշմարիտ արեգականն հալածեալ ՚ի ստուերական մարդոյ․ փափաքէի ով կոյս վշտագին՝ հանդիպել քեզ ՚ի փախստեանն քում, և վշտակից լինել քեզ ցաւօք սրտի իմոյ․ ժողովել զքեզ ՚ի տեղի անքոյթ, և ապրեցուցանել ՚ի ձեռաց շանց զմիածինդ քո ։ Այլ եղո՞ւկ ինձ, զի լսեմ պատասխանի․ զայդ հալածումն և՚ի քէն կրեցի․ և դու ինքն մեղօք մանկունք քո՝ զծնեալն ՚ի քեզ աւազանաւն զորդի իմ ոչ հալածեցեր միայն, այլ և վէրս ՚ի վերայ եդեր, և չարաչար սպաներ ։ Ա՛յ ինձ վա՛յ․ և ես ինքն յամօթ երեսաց իմոց խոստովանիմ զանձին իմ գործեալ զապիրատութի չար-

քան

փախչելունն է, հապա մօր աղէքը ի՞նչպս այրեցան տռչորվեցան :

## Աղօթք :

Ո՞վ ամենամաքուր ցաւալի՛ց մայր, ո՛վ ցաւոց և տրտմութե՛ան աղբիւր · ի՞նչ է կտեսնեմ որ հոգևոր լուսինդ ձմերիտ արևուն հետ կհալածվիս կոր սևութեմ մարդումէն · կըքաղձայի ո՛վ տրտմալից կոյս՝ որ ան փախչելու ժամանակը հոն գտվէի, որտանց ցաւակից ըլլայի, մէկ ապահով տեղմը քեզի ձարէի, ու քու մխածինդ չներու ձեռքէն խալըսէի : Բայց վա՛յ ինծի, որ պատասխան կլսեմ թէ ան հալածումը քեզմէ ալ քաշեցի · դուն ալ տղակութե՛ն մեղքերովս իմ որդիս՝ որ մկրտութե՛ք քու հոգուտ մէջը ծնածէր՝ չէ՛ թէ միայն հալածեցիր, հապա վիրաւորեցիր ալ, ու չարաչար մեռուցիր : Ա՛յ ինծի վա՛յ, ես ալ ամօթերես կխոստովանիմ գործած անզգամութիւ աւելի չար քան թէ հերովդէինը ·

քան զհերովդէսն․ վս̃ որոյ և ոչ
գտանեմ ը̃ որ վշտացայց արդեօք
ընդ հալածո̃ւմն՝ որ 'ի Հերովդէսէ,
թէ ընդ սպանութի̃ն՝ որ յինէն ։
Այլ քանզի ցանկամ լինել զո̃մ
զպարտս իմ, ընկալ վասն իմ ա-
ղաչեմ 'ի միածին որդւոյդ՝ զսիրտ
նոր և զհոգի նոր․ և 'ի լրութ̃է
ցաւոց քոց լցո́ զնա կրկին ցաւով,
ցաւով սիրոյ՝ ընդ փախուստն յե-
գիպտոս , և ցաւով արդարութե̃
ընդ չարիսն զոր 'ի նա գործեցի ․
որպէս զի վշտացայց ընդ քեզ հա-
նապազ․ և լացից միշտ զմեղս իմ,
և սպանից զանդամս իմ զերկրա-
ւորս ․ զի դարձեալ նկարեսցի 'ի
յիս ք̃ս անմահ կենդանութ̃բ․ և
խորտակեսցէ զձեռագործն սա-
տանայի , որ են ախտակիր մոլու-
թիք ․ և ինքն միայն թագաւո-
րեսցէ 'ի վերայ իմ յաւիտեանս
յաւիտենից ։

ուստի չեմ գիտեր որո՛ւն վրա ցա-
ւիմ, հերովդէսի ըրած հալածու-
մի՞ն վրա, թէ իմ ըրած սպանու-
թե՞ս վրա : Բայց որովհետև կը-
ցանկամ ամմէն պարտքս վճարել,
կխնդրեմ որ քու միածին որդիէտ
ընդունիս ինծի նոր սիրտ, նոր հո-
գի. ու քու ցաւոց առատութէն
լեցո՛ւր սիրտըս երկու ցաւով, ցաւ
մի սիրոյ՝ եգիպտոս փախչելուն
համար, ցաւ մընալ արդարութե
իմ ըրած չարիքներուս համար.
որ միշտ վշտանամ քու հետըդ,
լամ միշտ իմ մեղքս, ու մեռցը-
նեմ աշխարքի յօժարութիները.
որ նորանց ծնանի քո հոգւոյս մէջ
անմահ կեանքով, ու խորտակէ
սատանայի կուռքերը, որ են ախ-
տաւոր մոլութիները. որ ասան-
կով ինքը միայն թագաւորէ իմ
վրաս յաւիտեանս յաւիտենից :

✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱✱

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Գ։

’Ի վե՛ր ցաւոց ամենա՛սբ կուսին ’ի կորուս-անելոյն զորդին իւր զՅս՛ ’ի տաճարէն։

## ՄԱՍՆ. Ա։

Իցէ՞ երբէք տեսե՛ր քո զոչխար ծննդական, թէ զիա՛րդ գը-թոյլք տառապել ’ի գիւտ գառինն կորուսելոյ. ցաւագին մայրն իբր զանձնին մոռացեալ, հայի յայսկոյս յայնկոյս տարակուսանօք. ձայն ողորմ արձակէ. և ոչ տեսեալ ըզ-ծնունդ իւր, թողու զճարակ արօ-տի իւրոյ. շուրջ ընթանայ յա՛մ վայրս, և բարբառ ձայնի նո՛ր յառ-աջէ ք̃ զընթացս ոտից. ’ի գործ-արկանէ զա՛մ հնարս՝ զոր ուսու-ցանէ նմա բնութիւն. և ապա ’ի չգտանելն զնա՝ կայ անմխիթար և անճաշակ։

Ահա՛ քեզ ուրուական ինչ պատ-կեր ցաւոց ամենա՛սբ կուսին ընդ կորուստ անպարտ գառինն Յսի,

այն-

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Գ։

Մր̄ հոգւոյն ցաւոյը Վրա՛, երբոր պատճառէն ԺԲ կորսնցուց իր որդէն Յս̄ ։

## ԱՌՋԻ ՄԱՍԸ։

Տեսա՞ծ ես հիչ ծնօղ ոչխար մը որ իրեն կորսուած գառը գտնելու՝ ինչպէս գթալով կատառապի. խեղճ մայրը ինք զինք մոռցածի մը պէս՝ կը նայի ասդին անդին շուարած, ողորմուկ ձայն կը ձգէ. երբոր չի տեսներ իր ձագը, կը թողու արծելու տեղը. չորս դի կըյնի ամէն կողմ. իր ձայնը ոտքէն առաջ կվազէ. ամէն ճար կբանեցնէ ինչ որ բնութիւնը կը սորվըցնէ իրեն. էն ետքը երբոր չի գտնէ զգառը, անմխիթար առանց ուտելու կը մնայ ։

Ա՛ս ըլլայ քեզի մէկ մշուշ օրինակ մը ան ցաւուն՝ որ ունեցաւ սուրբ կոյսը իւր անարատ գառը յս̄ կորսնցնելուն պատճառով, ան խոր-

այնչափ տարօրինակ՝ որչափ նուաստագոյն է ոչխար քան զմայրն ա̃յ, և գառն անբան քան զգառն ա̃յ. այնչափ նուաղեալ 'ի նմանութե̃ն՝ որչափ ստորև է զգայութի̃ քան զբան, և ք̃ զշնորհս: Եթէ միայն սէրն զգայական այսչափ ինչ բնաւորութիւն գործէ յոչխարն, զիարդ բռնացան արդեօք 'ի ս̃բ կոյսն՝ սէրն բնական, սէրն բանական, և սէրն գերբնական: Ուսար 'ի գրոց, թէ երբեք շարժի երկիր. (Առակ. Լ. 21:) և ահա ս̃բ կոյսն երրեակ այս սիրով դղրդե̃լ շարժիւր բովանդակ 'ի հոգի և 'ի մարմին. զի կորոյս զորդին միակ՝ որ իւր էր բովանդակ. կորոյս զլցեալն ա̃մ գանձիւք կատարելութե̃ց, շնորհաց և փառաց. կորոյս զա̃ծ իւր, զտ̃ր և զփրկիչ: Ո՜վ անմխիթար և դառն կորըստեանս. և ո՞ր այլ կորուստ այսմ հաւասարիլ կարիցէ: Առաւել է այս քան զկորուստ ա̃մ մեծութե̃ց աշխարհի, քան զկորուստ սիրելութե̃ց, համբաւոյ, աւագու-

թե

տար հեռու օրինակ՝ ինչխըրտար որ նուաստ է ոչխարը քան զմայրն ոյ , անխըրտար քիչ նման՝ ինչխըր-տար որ վար է զգայութիւնը քան զմիտքը և քան զճնորքը : Ուէ որ միայն զգայական սէրը այսքան ներղունի կուտայ ոչխարին , հապա ի՞նչ ներղութիւն տուաւ մեզ կուսին բնական սէրը , բանական սէրը , և գերբնական սէրը : Լսած ես մեզ գրոց , որ իրեք բանով երկիրը կշարժի . ասանկ մեզ կոյսն ալ այս իրեք սիրով բոլոր դողաց շարժե-ցաւ հոգւով և մարմնով . ինչու որ կորսնցուց մէկին որդին՝ որ բոլոր իրենն էր . կորսնցուց ան որ լե-ցուն էր ամմէն աղէկութիւնով , շնոր-քով ու փառքով , կորսնցուց իւր աստուածը , տէրը ու փրկիչը :

Աս ի՞նչ անմխիթար ու դառն կո-րուստ է , կրնայ մի ըլլար ասոր նման ուրիշ կորուստ մի ալ : Շատ մենծ է ան՝ քան թէ կորսնցնել ամմէն աշխարքի հարստութիւնը , բարեկամութիւնը , անունը , իշխա-նութիւնը , յաղթութիւնը , մեծամեծ

կա

թե , յաղթութե , պանծալի կա-
տարելութեց , և ամ կենցաղականն
հաճելեաց . վասն զի ամենայնի
սոցա բովանդակութի ոչ ինչ հա-
ւասարի անզուգական ազնուութեն
Յոի ։ Բաւական է այս քան զորո-
շումն հոգւոյ 'ի մարմնոյ՝ դժնդակ
տանջանօք 'ի վր բերեալ . զի ոչ
այնչափ սերտ միաւորութի կայ ը
հոգւի և ը մարմնին , ոպ ընդ մա-
րխամ և ընդ յո , յորս նոյնութի
իմն ներգործեաց մայրութին սքան-
չելի ։ Ասան այսորիկ իմաստութն
քննութեց ասացին ոմանք 'ի վար-
դապետաց , թէ այս ցաւ կուսին
սրբյ կսկծեցուցիչ ևս է քան ըզ-
ցաւս նորա 'ի ժամ չարչարանաց
որդւոյն . վո զի յայնժամ թէպետ
և 'ի վիշտս տեսանէր զնա , բայց
և տեսանէր , ազատ գոլով 'ի վա-
րանական խորհրդոց . ցաւէր իբր
ընդ չարչարեալ , և ոչ իբր ընդ
կորուսեալ ։

կատարելութիւնները, և բոլոր աշ-
խարքի ախորժելիքը. ինչու որ ա-
սոնք ամմէնը մէկ տեղ չեն հաւա-
սարիր Յ՟ի անհամեմատ ազնը-
ւութե՟ը : Շատ աւելի է ան՝ քան
թէ հոգւոյ մարմնոյ բաժնըվիլը՝
սաստիկ տանջանքով. վ՟ա զի հոգ-
ւոյ ու մարմնոյ մէջ այնքան պինտ
միաւորութ՟ի չիկայ՝ որքան մա-
րիամու և Յ՟ի մէջը, որոնք իբրև
մէկ կըսէպվէին հրաշալի մայրու-
թե՟ պատճառով : Ասոր համար
բարակ մտածելով ոմանք վարդա-
պետք ըսին՝ թէ աս ցաւը որ կու-
սին աւելի կսկուծ եղաւ՝ քան թէ
Յ՟ի չարչարանաց ժամանակին քա-
շած ցաւերը. ինչու որ ան ժամա-
նակը իրաւ վշտի մէջ կտեսնէր
իր որդին, բայց կտեսնէր առանց
ուրիշ հոգ ու մտմտուք ունենա-
լու. կըցաւէր ինստոր չարչարվօ-
ղի վրայ՝ չէ՛ թէ ինստոր կորսըվա-
ծի :

## ՄԱՍՆ· Բ։

Նոյն Մարիամ ոչ տեսեալ առ իւր զցանկալին աչաց իւրոց, թէպէտ և հարաւ ՚ի տրտմութի մեծ, սակայն քաջալերս տայր անձինն ակնունելով թէ ՟է ուղեկից ծանօթան իցէ. զի որով ինքն կաթոգին էր առ նա, նոյնպէս և զայլս նորին ընկերութեն համարէր փափաքողս։ Սա՟ որոյ փութապէս երագէր թեւօք սիրոյն, գայր խառնէր ՟է դրացիս և ՟է ազգականս. յուզէր զգուշութ՟, և հարցանէր զամենեսին, մի՛ թէ տեսիք զոր սիրեաց անձն իմ։ Այլ սակայն ո՛չ եգիտ զնա ՚ի նո՟, և ո՛չ ՚ի նոցանէ էառ ծանօթս ինչ վ՟ սիրելոյն իւրոյ. զի զխա՟րդ գիտելի լինէր այլոց, որ ՚ի մօրէն ծածկեցաւ։ Ապա և յայսմ մասնէ մխիթարութե վրէպ գտաւ մայրն ցաւագին. և ցաւ սրտի նր՟ զօրացաւ յոյժ յոյժ. զի յոյս վրիպեալ՝ կրկին տանջէ ք՟ զոր մխիթարեացն։

Ո՞վ,

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ։

Լոյսն մարխամ չտեսնալով քովը իրեն աչքէն լոյսը, իրաւ որ շատ տրտմեցաւ, բայց իրեն սիրտ կու տար յուսալով թէ գտնածու ճամբորդաց հետը ըլլայ. վ՞ա զի ինքը անոր վրա թալկտելով, կը սեպէր թէ ուրիշներն ալ անոր ընկերութեր կցանկան։ Ուստի արտորնօք վազեց սիրովը թռչելով, գնաց մտաւ դրացիներուն ու ազգականաց մէջը, կփնտռէր աղէկ մը, ամմէնուն կը հարցնէր՝ տեսա՞ք մի իմ սիրելիս։

Բայց չիգտաւ անոնց մէջ, տեղեկութ մը ալ չառաւ անոնցմէ. հիչ կարելի՞ էր որ ուրիշները գիտնան, երբոր իր մօրմէն ծածկըվեցաւ։ Ուստի աս մխիթարութ՟է ալ զրկըվեցաւ ցաւալից մայրը, ու իրեն ցաւը շատ աւելցաւ. որովհետեւ յոյսը երբոր չիկատարվիր՝ կըկնապատիկ կտանջէ քան առջի մխիթարանքը։

Ո՞վ, զիա՞րդ 'ի վարանս անհնա-
րինս ըմբռնեցան յայնժամ խոր-
հուրդք նորա. զի՞նչ խորհէր, և
զի՞նչ ասէր 'ի սրտի իւրում: Ո՞ւր
ես արդ որդեա՛կ իմ ասէր. ո՞ւր
արդեօք գտից զքեզ, որ ա̄մ ու-
րեք գտանիս ա̄ծութ̄բդ. ո՞ւր հանգ-
չիս 'ի միջօրէի. ո՞ւր օթիս 'ի գի-
շերի. ո՞ քեզ ասպնջական և կե-
րակրիչ. առ իմէ՞ մեկնեցար 'ի մէնջ
ո՞վ զաւակ իմ. միթէ զատե՞ր զոք
առաւել սիրելի և սիրող ք̄ զիս:
Մի՛ արդեօք չարի պատահեցար.
մի՛ արդեօք հերովդի կամք սպա-
նուե̄ն կատարեցան 'ի քեզ 'ի կա-
մակցաց նր̄: Նուա՞ղ ինձ անմխի-
թար մօրս. ծանր էր ինձ չտեսա-
նել զքեզ և վայրկեան մի. և ա-
հա էանց օր, և զքեզ ոչ տեսա-
նեմ. վասն որոյ քուն հատեալ է
յաչաց իմոց. և իմ կերակուր՝ ար-
տասուք են զցայգ և զցերեկ, 'ի
խնդրել՝ թէ ո՞ւր է ա̄ծ իմ: Այլ
դու ո՞վ որդեակ՝ կեա՛նք հոգւոյ
իմոյ, որ տեսանեսդ զտառապանս
մօր քո, ցո՛յց ինձ զդէմս քո. տո՛ւր

ինձ

Ո՞վ թէ ի՞նչ սոսկալի մտմտուք ու հոգ ունեցաւ այն ժամանակը , ի՞նչ կըմտածէր , ի՞նչ կըսէր սրտին մէջ ։ Ո՞ւր ես հիմա որդի կըսէր , ո՞ւր գտնեմ զքեզ՝ որ ամմէն տեղ կաս քու ա̃ծութե̃ը ։ ո՞ւր կըհանգչիս ցորեկը , ո՞ւր կպառկիս գիշերը ։ ո՞վ քեզի տուն ու կերակուր կուտայ ։ ինչո՞ւ զատուեցար մեզմէ ո՞վ որդի ։ գտա՞րմի ինծմէն աւելի սիրելի մը , կամ սիրող մը զքեզ ։ Չըլլա՞յ թէ փորձանքի մը եկար ։ չըլլայ թէ հերովդէսի ըսպաննելու կամքը դրաստ կատարեցին անոր կամակիցները ։ Վա՜խ անմխիթար մօրըս ։ ինծի դժար կուգար երբոր քիչ մը ատեն ալ քեզ չիտեսնէի ։ հիմա օր անցաւ , ու քեզ չեմ տեսներ ։ քունը աչքէս կորեցաւ ։ կերակուրըս արցունք է գիշեր ցորեկ՝ փնտռելով թէ ո՞ւր է իմ ա̃ծս ։ Ո՞վ որդի՝ հոգոյս կեանքը , դու որ մօրըդ տառապանքը կտեսնես՝ ցըցո՞ւր ինծ քու երեսդ ։ տո՞ւր ինծ որ գտնեմ զքեզ ամմէն բանի գտնօղդ , քա-

նի

ինձ գտանել զքեզ զգտիչդ ամի, մինչև իմ կեանքս կորուսեալ իցեն։

## ՄԱՍՆ. Գ.

Մարմնական ցաւոց այս հանգամանք են, զի՛ի յերկարելն՝ և մեղմանան. այլ սակայն հոգւոյ ցաւք յառաջեկեալք ՚ի սիրոյ՝ իբրև ըղձականս շարժմունս քանի՛ և յերկարին՝ նոյնչափ առաւելուն, և ՚ի վախճանի սաստկագոյն լինին։ Իսկ արդ՝ եթէ ցաւ կուսին ընդ կորուստ ածորդւոյն իւրոյ՝ այնչափ դառն էր ՚ի սկզբանն, քանի՛ ևս սաստկացաւ դառնութիւն նորա, յորժամ երեքօրեայ ձգեցաւ այն։

Ո՜ այսորիկ չէն ինչ զարմանք, թէ մայրն ցաւալից՝ որ յայլ ցաւս իւր ամենևին անբարբառ վշտանայր, յայսմ ցաւագինս բարբառեցաւ առ որդի իւր՝ ՚ի գտանելն զնա ՚ի տաճարի անդ։ Որդեակ ասէ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ։ (Ղուկ. Բ. 48.) Ո՞վ եղերական ձայնիս, որ զամ զտագնապ մայրա-

նի որ իմ կեանքս կորսըված չէ :

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ։

Մ՝արմնաւոր ցաւերը անանկ են որ՝ երկարելնուն կըթեթևընան. բայց հոգու ցաւերը որ սիրոյ առաջ կուգան, ընականն շարժմանց պէս քանի որ երկըննան՝ կմեծնան, ու էն վերջը աւելի ուժով կըլլան : Ասանկ ըլլալով, թէ որ մը կուսին ցաւը իւր ծնողքին կորսընցնելուն վրա առջի բերանը այնքան դառն էր նէ, ի՞նչ խըստար հապա աւելցաւ դառնութիւը երբոր իրեք օր քշեց :

Ասոր համար զարմանք չէ որ ցաւալից մայրը՝ ուրիշ ցաւերն որ սուսիկ կըքաշէր, հոս մեծ կսկիծով խօսեցաւ որդուն հետ՝ երբոր գըտաւ տաճարին մէջ, ըսաց . Որդի, ••• ի՞նչ բան ըրեր դուն մեզի : Ի՞նչ ողորմուկ խօսք է, որ մայրական սրտին տագնապը մէկանց առջև կըբերէ : Ինքը սուրբ յովսեփէն առաջ կըխօսի, ինչպէս

ցա-

րական սրտին թախծագին նկա-
րագրէ ։ Ինքն յառաջէ քան զոքն
յոխնէփ ՚ի խօսել , որպէս առաջին
էր և ՚ի ցաւել ։ Նախ զորդեակն ա-
նուն գործակալով առնէ ․ զի այն նախ
դրոշմեալ կայր ՚ի սրտին ․ և ոչ կա-
րէր լռել զայն՝ որ առաջին պատ-
ճառ էր իւրոց կսկծանաց ։ Պաւ
ասէ գործեցէք ․ մի զի զայլ ցաւսն
սակս որդւոյն կրեաց ․ իսկ զայս
ցաւ՝ յորդւոյն կրեաց ։ Ո ի՛նչ գործ
գործեցէք ասէ ։ Նա և ինքն ոչ
գտանէ զօրինակ ՚ի յայտարարութի
տառապանաց իւրոց ․ Հարցանէ մի-
այն , և Հարցմամբքն առաւել ծա-
նօյց զմեծութի ցաւոցն , քան եթէ
բանիւ մեկնել կամեցեալ էր ։
Այլ թո՛յլ տուր ինձ՝ մա՛յր ցաւա-
գին , անսա՛ աղաչեմ ․ և ես անմը-
տութեամբս իմով փոխան որդ-
ւոյդ տացքեզ պատասխանի ։ Այս
գործ՝ տխուր է քոյին սիրապա-
տար յափշտակութեդ ․ փոխանակ
զի դու այնչափ սրտացուցեր զոր-
դին միով ակամբ քով , ( Երգոց ․
Դ ․ 9 ․ ) մինչև առ սէր քո թողուլ
նմա

ցաւելուն ալ ինքն էր առջինը •
պինտ առաջ օրէն անունը կու-
տայ, ինչու որ ան էր առաջ տպված
սրտին վրա • ու չէր կրնար չըսել
զայն որ իր կսկիծին առջի պատ-
ճառն էր ։ [illegible] ըսէր կըսէ , վո՞ զի
ուրիշ ցաւերը որդւուն պատճառ-
ովը քաշեց • բայց զաս ցաւըս որ-
դուընմէն քաշեց ։ Ի՞նչ բան ըսէր
կըսէ • տե՛ս որ ինքն ալ չիգտներ
կոր մէկ կերպ մը իրեն տառա-
պանքը իմացընելու • կհարցնէ մի-
այն , ու հարցնելովը աւելի յայտ-
նեց ցաւուն մեծութիւնը , քան թէ
ուզէր խօսքով մեկնել ։

Բայց թո՛ղ տուր ինծի ո՛վ ցաւա-
լից մայր , կրխնդրեմ կեցի՛ր՝ որ-
դուդ կողմանէ ես պատասխան
տամ կարճ խելքովս ։ Աս գործքս
մէկ հատուցում մըն է քու սիրո-
ղական յափշտակութենը • ինչու
որ դուն այնքան որդոյն ա̅յ սիրտը
քաշեցիր քու մէկ աչքովդ , ինչ-
վան քու սիրոյդ համար թողուց
հօր ա̅յ ծոցը՝ մարդ ըլլալով • ուս-
տի ինքն ալ հիմա հօր ա̅յ սիրոյն

հա-

նմա անօրինաբար զծոցն Հայրենի. ո՟վ որոյ և նա կամեցաւ այժմ առ սէր Հօր թողուլ զգիրկդ մայրենի: Որդի՛ է քո Հարազատ. ո՟վ որոյ և մօրդ նմանել կամեցաւ. զի դու զքո ծնօղս թողեր ո՟վ սիրոյ տաճարին, և նա զքեզ եթող ո՟վ սիրոյ տաճարին: Սքանչելիք են այս զօրութեն ա՟յ. զի 'ի ցաւս մահու պահեաց զքեզ կենդանի. և եցոյց՝ եթէ ո՛չ որդի միայն է քո այլև տ՟ր և ա՟ծ: Նախաճաշ է այս յետին Հանդերձեալ ցաւոց քոց, յորժամ երեքօրեայ մահուա՛մբն մեկնեցի 'ի քէն ամենափափաքելի որդիդ. և ո՛չ ևս 'ի տաճարի գըտանիցես զնա՝ այլ 'ի կնքեալ և 'ի զգուշացեալ գերեզմանի:

## Աղօթք:

Եւ արդ՝ ո՞վ մայր ցաւոց և վըշտաց, զարմանամ յիրաւի ընդ մեծութ՟ի ամենակսկիծ ցաւոց քոց՝ որոց տարար 'ի կորստեան որդւոյդ սիրելւոյ. բայց առաւել զարմանք են

համար ուզեց թողուլ քու մայ-
րական գիրկը ։ Դու հարազատ
որդիդ ըլլալով, ուզեց քեզի նմա-
նիլ ․ և ինչպէս դուն թողուցիր
ծնօղքդ տաճարին սիրոյն համար,
ինքն ալ քեզ թողուց նոյն տաճա-
րին սիրոյն համար ։ Այս գործքս
հրաշք մըն է ա̃յ կարողութե̃ն ․ որով
մահուան ցաւու մէջ քեզ կենդա-
նի պահեց ․ ու ցըցուց թէ քեզի
որդի միայն չէ, հապա տ̃ր և ա̃ծ
ալ է ։ Այս մէկ նախաճաշիկ մինչ
քու եօթի քաշելու ցաւուն, երբ-
որ իրեք օրվան մահուանը պի-
տի բաժնըվիս քեզմէն ցանկալի զա-
ւակդ, որ չէ թէ տաճարին մէջը
պիտի գտնես զինքը՝ հապա կըն-
ւած ու պահպանած գերեզմանի
մէջ ։

Աղօթք ։

Ով ցաւոց և վշտաց մայր, կզար-
մանամ իրաւցնէ դառնակսկիծ
ցաւուդ մեծութե̃ն վրա, որ քա-
շեցիր սիրելի որդոյդ կորստեանը
պատճառով ․ բայց եւելօք զարմա-

են ինձ ընդ խստութ̄ի սրտի իմոյ ,
որով զցաւ քո զայդպիսի զմտաւ
ածեալ , մնամ անշարժ 'ի կարեկ-
ցութ̄ի քեզ ։ Եւ առաւել ամաչեմ
յանձն իմ , զի ընդ կորուստ իրաց
ունայնից՝ համբաւոյ , կամ հան-
գստեան , կմ̄ առողջութ̄ե՝ զգա-
ծիմ ցաւօք ․ իսկ ը̄ քոյդ անզու-
գական կորուստ՝ ո՛չ ևս ։ Ո՛վ դու
մե՛ծազօր տիրուհի , բա՛րձ յինէն
զխստութ̄ի իմ ․ և զամօթալի ցաւս
փոխարկեա՛ յարժանաւոր ցաւս
քո ․ ք̄ զի և դու լցար ցաւօք՝ ո՛չ
զի 'ի քեզ միայն վշտասցիս , այլ
զի և զմեզ վշտակիցս քեզ արաս-
ցես ։ Վասն որոյ տո՛ւր ինձ զցաւս
քո , մանաւանդ թէ զիմն ․ զի դու
անպարտ կորուսեր զսիրելիդ քո
մարմնով , այլ ես բիւրապատիկ
յանցանօք կորուսի զնա հոգւով ․
որով ինձ արժան է ցաւիլ ը̄ կո-
րուստ նր̄ , և երեքօրեայ խնդրել
զնա ․ յ̄ր դառն զղջմամբ սրտի ,
Ճշմարիտ խոստովանութ̄ բերանոյ ,
և ջերմեռանդն գործովք ապաշ-
խարութ̄ե ․ և մի դադարեսցէ յիս

այս

նալի է իմ սրտիս պնտութիւնը, որ մտածելով քու այդպիսի ցաւը՝ չեմ շարժիր ցաւակից ըլլալ քեզի ։ Ու աւելի կամչնամ ես ինծի՝ որ փուշ բան մը, կիմանուն, կամ հանգստութիւն, կամ առողջութիւն կորսնցնելու համար ցաւ կունենամ․ իսկ քու անհամեմատ կորսնցուցածիտ վրա հի՛չ ։ Բայց հրամանքդ ո՞վ կարող տիրուհի, վերցուր ինծմէ իմ պնտութիւնս, և իմ ամչնալու ցաւըս փոխէ՛ քու արժանաւոր ցաւուտ հետը․ վ՟զի դուն ցաւով լեցվեցարնէ՝ միայն քու վշտանալուտ համար չէր, այլ անոր համար որ մեզ ալ քու վշտացտ հաղորդ ընես ։ Ուստի խնդրեմ տուր ինծի քու ցաւըտ, մանաւանդ թէ իմ ցաւըս․ ինչու որ դուն առանց քու պակսութեանը կորսնցուցիր մարմնով քու սիրելիդ․ իսկ ես հազար կերպ մեղքով կորսնցուցի զինքը հոգւով․ որ ինծի պէտք է ցաւիլ անոր կորսնցնելուն վրա, ու իրեք օր ետևէն ընկնիլ փնտռել զինքը․ կուզեմ ըսել,

այս ցաւ, մինչև գտից զնա 'ի տան հօր իւրոյ 'ի յերկինս, և առ նմա եղէց յաւիտեան:

ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Դ:

'Ի վ̄ր ցաւոց ամենասուրբ կուսին՝ յորժամ տար 'ի մահ պատրաստեալ Յ̄ս, խաչ 'ի յուսս փարեալ լինէր 'ի Գողգոթայ:

ՄԱՍՆ. Ա:

Դոյժ եհաս առ քեզ կոյսդ, թէ միածինն քո Յ̄ս ըմբռնեալ յարիւնարբու թշնամեաց իւրոց յետ բազում ձաղանաց, չարախօսութեանց, և կսկծելի հարուածոց, 'ի մահ եւս դատեցաւ անպարտն, և բարերարն տիեզերաց: Որ լեզու ժուժեաց արդեօք 'ի պատմել նմա զայս. և զո՞ր վէրս գործեաց 'ի սիրտ Աստուածամօրն այս լուր մահագուշակ: Ի՜ թէ հեղեայ քահանայի

բե-

սաստիկ սրտի զղջումով, Ճշմարտապէս խոստովանելով բերնով, ու ջերմեռանդ ապաշխարանք ընելով, ու չիդադրի ինծմէն այս ցաւըս, ինչվան որ գտնեմ զինքը իր հօր տունը երկինքը, և հոն իրեն քովը մնամ յաւիտեան ։

*********************

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ․ Դ ։

Սբ̄ Կուսին ցաւոց վրայ՝ երբոր Յս̄ դատապարտեցին, ու խաչը կռնակը կը տանէին Գողգոթա ։

### ԱՌՋԻ ՄԱՍԸ։

Բօթ ձայն մը հասաւ ծը̃ կուսին՝ թէ իւր միածինը Յս̄ անողորմ թշնամեաց ձեռք ընկնելով, շատ խայտառակելուն, չարախօսելուն և չարաչար ծեծելուն ետքը՝ մահուան վճռի տակ աընկաւ անմեղը և աշխարքի բարերարը ։ Ո՞ր լեզու իշխեց աս բանը պատմելու իրեն, և ի՞նչ վէրք տըւաւ ա̃ծածնայ սրտին աս մահաբեր բօթը ։ Ինչ որ հեղի քահա-

 նային

բեկաւ ողն, և մեռաւ անդէն, 'ի լսել միայն՝ թէ առաւ տապանակն տ̃յ յայլազգեաց, (Ա. Թագ. Դ. 18.) ապա ո՞ր բեկումն և ցաւ մահու պաշարեաց զսիրտ մարիամու, 'ի լսել թէ նոյն ինքն որդին ա̃յ ըմբռնեալ կապեցաւ 'ի ձեռս անթլփատից սրտիւք. և այն զի գիտէր հեղի՝ թէ տապանակն ա̃յ առ այլազգիսն իսկ պատկառելի էր և 'ի մեծարանս. և ը̃ հակառակն՝ քաջ գիտէր ո̃ք կոյսն, զի՛որդ յատելութ̃ի և 'ի թշնամանս ունէին հրէայք զք̃ս, որք յա̃մ ժամ չարիս նիւթէին նմա. և յագուրդ անձանց համարէին զհեղումն արեանն նորա ։

Յուդաս մատնիչ՝ որ ո՛չ յողոքանաց փրկչին մեղմացաւ, և ո՛չ 'ի սպառնալեաց կորստեանն սարսեցաւ, տեսեալ յետոյ՝ թէ պարտաւորեցաւ ք̃ս, հարաւ 'ի զիղջ մեծ ։ Ապա 'ի մի՛տ առ, ո՞ր աղէտք հարան 'ի սիրտ մօրն 'ի լսել նր̃ զայն դատակնիք ։ Այն որդի՝ որ դատէ զա̃մ երկիր, որ նա ինքն կարգել

դա-

նային մէջքը կոտրեցաւ և անտե-ղը մեռաւ՝ լսելով միայն թէ ի̅ւ տապանակը առին այլազգիները , Հապա ի՞նչ կոտորում , ի՞նչ մահուա՜ն ցաւ պաշարեց մը կուսին սիրտը՝ երբոր լսեց թէ ինքն որդին ի̅ւ՝ սրտով անթլփատներուն ձեռքը ընկաւ կապվեցաւ . անխաէ Հեղի գիտէր որ այլազգիները տապանակէն կըվախնային ու պատի՜ւ կուտային . ասոր ներհակ մը կոյսը աղէկ գիտէր՝ որ հրէաները ինչպէս կատէին ու կանարգէին զ.քս̅ . որ ամմէն իժիր անոր չարիք կըփնտռէին , ու արիւնը թափելը իրենց փորը կշտացնել կըսեպէին ։ Յուդա մատնիչը , որ ո՛չ քս̅ի կակուղ խօսքերէն կակղցաւ , ո՛չ իր կորստեան սպառնալիքէն սարսափեցաւ , ետքը տեսնալով որ Յս̅ պարտաւորեցին նէ՝ շատ փիւշման եղաւ ։ Ասկից իմացիր թէ ի՞նչ սրտի կսկիծ ունեցաւ մայրը՝ երբոր լսեց ան վճիռը ։ Ան որդին որ ամմէն երկիր կըդատէ , ու ինքը դրուա՜ծ է դատաւոր կենդանեաց

դատաւոր կենդանեաց և մեռե-
լոց, վկայէր զանձնէ, թէ ոչ եկի
դատել զաշխարհ. որ զչնացեալս և
զմաքսաւորս արձակեաց ’ի պար-
տեաց. և ահաւասիկ դատակնիք
ընդունին ’ի մարդոյ՝ ոչ ’ի տգիտէ,
այլ ’ի գիտողէ անմեղութեան նոր. և
դատի ոչ ’ի բանտ՝ կամ ’ի տու-
գանս՝ կամ յաքսորս, այլ առ ’ի մահ
դառն, ’ի մահ խաչի՝ իբրև ապըս-
տամբ ’ի կայսերէ, և հայհոյիչ
այ, և անիծեալ յօրինաց: Ո՛աքէ.
ոչ կայր անպարտականութիւն ինչ
այնպէս ծանուցեալ և վկայեալ,
որպէս քո՛ին. և ոչ եղև պարտաւո-
րութիւն խիստ և ամօթալի իբրև
զքո՛ին. և զիա՞րդ ապա հնար իցէ
գտանել ցաւս իբրև զքո՛յ կուսին՝
’ի խորհել նոր զայս ամենայն:

## ՄԱՍՆ. Բ:

Դիմեաց մայրն ցաւագին յամ-
բոխ հրապարակին, տեսանել ա-
չօք՝ զոր լուաւ ականջօք. և առա-
ւել

և մեռելոց, իր վրա կվկայէր՝ թէ
չեկայ որ աշխարք դատապարտեմ.
որ չնացօղները ու մաքսաւորները
պարտքէ արձկեց. Հիմայ ինքը կը-
դատապարտվի կոր մարդուն՝ որ
չէ՛ թէ տգէտ էր, այլ գիտէր ա-
նոր անմեղութիը. ու կըդատվի ո՛չ
թէ գընտան կենալու, կամ տու-
գանքի (ճէրէմէ) կամ աքսորանքի
(սիւրկիւնի,) հապա սատրիկ մահ-
ուան, խաչի վրա մեռնելու, ին-
տոր ապստամբ մը կայսերէն, ըն-
տոր հայհոյօղ մ̃այ, ընտոր անիծած
օրէնքէն: Ա՞խ վա՞խ, չկար մէկ
անմեղութի մը այնքան յայտնի ու
վկայած՝ ինչպէս ք̃ինը. ու չեղև
մէկ պարտաւորութի մը անանկ
խիստ և խայտառակ՝ ինչպէս ք̃ի-
նը. Հապա կրնա՞յ մի ըլլար ցաւ
մը մ̃ր կուսին ցաւուն պէս՝ երբոր
աս ամմէն բաները կըմտմտար:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ:

Ցաւալից մայրը վազեց գնաց
բազմուէ մէջ՝ որ ականջով լսածը
աչքով տեսնէ. և շատ աւելի տե-

ւել ետես զ̃ք զոր լուծանն ․ բռնու-
թն սիրոյն և ցաւոց զօրացաւ քան
զկուսական առանձնութն նր ․ և
որ անընդելն էր տեսութե համ-
դիսի մահու յանձն օտարաց, նախ
առաջին ետես զայն յորդի իւր ։
Տեսանէր՝ և ահա ամբոխ շանց
կատաղելոց ՚ի միջի ունելով զպա-
րածածկեալն ՚ի սերովբէից, ձգեն
զնա ՚ի զենումն լի անարգանօք ։
Տեսանէր՝ զի նա որ կրէ զա̃մ բա-
նիւ զօրութե իւրոյ , բարձել կրէ
զխաչն բանիւ տկարութե մերոյ ․
նա յոգիս սպասատան՝ հեծէ ընդ
թեւամբ ․ իսկ որք տանին՝ խայ-
տան իբրև զպարաւորս հալա-
նեաց ․ աղաղակեն , ցասմունս , հայ-
հոյեն , հարկանեն անողորմ , և
մղեն յընթացս , ոչինչ հայեցեալ՝
թէ քաղլն ոգիք նր ՚ի ծանրութե
անտի , յաշխատութէն , ՚ի ցաւոցն ,
և յանկմանէն ։ Օ ի՞նչ տեսիլ է-
ցէ ո՞վ ցաւալից մայր ․ ո՞չ սա նա՛
է՝ զոր ՚ի սրբասնել գիրկսդ դրդ-
ուէիր , և ՚ի մէջ ստեանց հանգու-
ցանէիր սիրողապէս ․ և ահա փո-
խա-

տաւ քան թէ լամծը · իր սիրոյն ու ցաւոց ուժը՝ յաղթեց կուսական քաշվածութեը · ու ինքը որ չէր սորված մահուան գործք տեսնել ուրիշի վրայ, էն առաջ իր որդուն վրայ տեսաւ ։ Արտեսնէր որ ի՛նչ նայիս՝ կատղած չներ ժողված մէջերնին առերեն զան՝ որ սերովբէներէն կծածկվէր, ձգեր կրտանին սպաննելու՝ հազար անարգութենով ։ Արտեսնէր՝ ան որ ամմէն ստեղծուած կրբունէ իրեն կարողութը, խաչը վերցուցեր կրտանի մեր տրկարութը · հոգին բերանը եկած կըհեւայ բեռանը տակ · իսկ տանօղները հարմնիքի պար բռնածի պէս կըձխան, կպոռան, կըսրդողին, կհայհոյեն, կզարնեն անողորմաբար, կհրեն որ քալէ · հիչ չեն նայիր թէ անոր հոգին կըքաղվի ծանրութէն, հօգնելէն,
ցաւէն ու ընկնելէն ։

Ս ի՞նչ տեսիլքէ՝ ո՞վ ցաւալից մայր · սա ան չէ՞ որ քու մաքուր գիրկըտ կըգգուէիր, ու ծծերուտ վրայ կհանգչեցնէիր թայլկտելով ·

խանակ մօր՝ դաւհիճքն են առ նմ. և փոխանակ գրկացն՝ խաչ, փոխանակ գգուանացն՝ քրտունք, և փոխանակ մայրենի սիրելութեան՝ ատելութիւն մահու։ Եթէ բազմութիւն կանանցն՝ որք յայնժամ զհետն երթային, առ աղէտից ցաւոցն կոծէին և աշխարէին զնա, (Ղուկ. իգ. 27.) ապա ո՞ր ցաւք ձմլէին զսիրտ մօրն 'ի տեսիլ այնպիսի նշաւակի։

## ՄԱՍՆ. Գ։

Ո իմա՞րդ 'ի խոր խոցեցաւ սուրբ կոյսն, յորժամ դէմ յանդիմանն ետես զորդի իւր՝ ոչ Ած կերպարանաց՝ զոր ետ նմ կուսական ծննդեամբն, այլ Ած կերպարանացն՝ զոր զգեցոյց նմա ապստամբութին իսրայէլի։ Պսակ 'ի փշոց կապեալ 'ի գլուխ այնմ, որ իբրև փառք միեղջերուին պաշտպանեաց իսրայէլեան տոհմին։ Ըն կերպարան հօր՝ թքով օծեալ 'ի դէմսն 'ի պղծաշուրթն ժողովրդենէն։ Թու արքայութե նորա՝ խաչն նախատանաց.

հիմա մօր տեղը դահլիճներ կան քովը, գրկի տեղը՝ խաչը, գրգուանքի տեղ՝ քրտինք, մայրական սիրոյն տեղը՝ մահաբեր ատելութիւն : Ուէ որ կանանց բազմութիւնը որ ան ատենը Յիսուսի ետևէն կերթային, իրենց կսկծուն կրծեծկվէլին ու կուլային նէ, հապա ի՞նչ ցաւով մօրը սիրտը կըտրորեր ան ողորմելի տեսքէն :

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ:

Ո՞րքան խորունկ վէրք ունեցաւ սբ. կոյսը՝ երբոր դիմադէմ տեսաւ իր որդին ո՛չ ան կերպարանքովը որ կուսական ծնունդով տվերեր իրեն, այլ ան կերպարանքովը որ հրեից անզգամութիւնը տվաւ : Գլուխը փշէ պսակ կապած՝ անոր որ ինտոր մեղքերուն փառք եղերեր ու պաշտպաներեր իսրայելացւոց ազգը : Ա̄ծ հօր ո̄յ կերպարանքը՝ թուքով ծեփված իր երեսը պիղծբերան ժողովրդէն : Իրեն թագաւորական աթոռը՝ խայտառակ

նաց. մարմինն՝ համակ վիրաւոր. հանդերձք նորա՝ արեամբ ծաղկեալ. և ինքն պակասեալ յամ̃ ուժոյ՝ զօրացուցիչն երկնաւորաց և երկրաւորաց: Ո՞վ փութացար յայս տեսիլ սգաւոր՝ ո՞վ գալարաղի մայր. տես արդ՝ սա՞ իցէ որդի քո՝ զորմէ ասէիր, թէ սպիտակ է և կարմիր՝ ընտրեալ 'ի բիւրուց: (Երգ. Ե. 10:) Ապաքէն այժմ սպիտակ է գարշ թքովք, և կարմիր՝ արեամբ ներկած. բայց ո՞ւր են բիւրքն՝ որք ընտրեն զնա. տեսանեմ ահա զբիւրս բիւրոց, որք ընդոտնեն զնա, հայհոյեն և խնդրեն առ 'ի մահ, և ո՛չ 'ի կեանս: Այնչափ այլակերպեալ է նր̃ տեսիլ, զի և ճանաչել քեզ զնա՝ անմարթ էր, թէ ոչ սէրն մայրենի զօրացուցանէր զհայեցուա՛ծս քո: Այլ լե՛ր նմ̃ ուղեկից, մինչև անցեալ բազմեսցի յաթոռ անարգանաց իւրոց. և դու կացցես ընդ աջմէ նր̃, զարդարեալ նորանշան պսակաւ խաչին:

խաչն էր ․ մարմինը բոլոր վիրաւո֊
րած ․ հագուստը արիւնով ներ֊
կած , ու ինքը ամենուն ուժէ ըն֊
կած՝ ան որ կըզօրացուցանէ երկ֊
նաւորները ու երկրաւորները ։
Ի՞նչ վազեցիր եկար ասանկ խըղ֊
ճալի տեսիլքը տեսնելու ո՞վ աղէ֊
խորով մայր ․ նայէ՛ հիմա՝ ա՞ս է քու
որդիդ որ կըսէիր թէ ճերմակ է
ու կարմիր , ընտրուած բիւրաւոր֊
ներէն ։ Իրաւ որ հիմա ճերմակ է
գարշելի թուքով , ու կարմիր ա֊
րիւնով ներկված ․ բայց ո՞ւր են ան
բիւրերը որ զինք ընտրեն ․ կտես֊
նեմ՝ բիւրաւորներ որ զինք ոտքի
տակ կառնեն , կհայհոյեն , մերժը֊
նել կուզեն՝ չէ՛ թէ ապրեցնել ։
Այնքան փոխված է իրեն տեսքը՝
որ դժար կրնայիր ճանչնար՝ թէ
որ մայրական սէրը աչքդ չիզօրա֊
ցուցանէր ։ Բայց գնա՛ իրեն հե֊
տը , ինչվան որ անցնի նստի իրեն
խայտառակ աթոռը , ու դու ալ
աջ կողմը կենաս՝ զարդարված
նորաշէն պսակով խաչին ։

## Աղօթք :

Ահաւասիկ տեսանեմ ո՛վ ամենա-
սր. կոյս՝ զնորն իսահակ , զի բար-
ձեալ զփայտ ողջակիզի իւրոյ՝ ե-
լանէ 'ի լեառն զմռւսոյ : Բայց ու-
ղեկից նմին ո՛չ ես տեսանեմ ըզ-
հայրն աբրահամ, այլ զմայրդ սա-
ռա , բարձեալ և դու զհուր սիրոյդ
և զսուր ցաւոցդ : ( Ծննդոց . իբ .
6 : ) Այո՝ քեզ վիճակեցաւ զաբ-
րահամուն և զսառայի անձկութիւս
միանգամայն կրել , և յարեան
որդւոյդ թաթաւիլ անմխիթար
սգովք :

Այլ ընկա՛լ աղաչեմ , ընկա՛լ և
զիս 'ի հաղորդութիւն քոց ցաւոցդ.
մասնաւորեա՛ ինձ 'ի հրոյ քումմէ.
և հա՛ր զսուրդ 'ի սիրտ անկարե-
կիր քո ծառայի . ոպ̃ զի յափշտա-
կել 'ի սէր քո և որդւոյդ , եղէց վի-
րաւոր ցաւովք անողջանալի : Ո՛վ,
զիա՛րդ փափաքէի առաջիկայ գը-
տանիլ յայն հանդէս սգալի, և ըն-
կերել քեզ ցաւօք և արտասուօք .
և

## Աղօթք:

Ո՜վ ամենամաքուր կոյս, կըտեսնեմ նոր Իսահակը՝ որ իրեն զոհէն փայ-տը կռնակը առեր կելլէ դառնու-թեան լեռը. բայց իր հետը չեմ տեսներ հայր Աբրահամը, այլ Աստուա մայրըտ, որ կըտանիս դու-ալ սիրոյդ կրակը, ու ցաւոցդ սու-րը: Ասանկ վիճակեցաւ քեզի որ աբրահամու ու սառայի վիշտը դուն մինակ քաշես, և որդուդ ա-րունովը թաթխըվիս անմխիթար տրտմութե՜:

Հիմա կաղաչեմ որ զիս ալ ըն-դունիս հաղորդ քու ցաւոցդ. տո՛ւր ինծի ալ քու կրակէտ, ու քու սուրըտ զա՛րկ՚ի սիրտ պնտա-ղէք ծառայիս. որ ես ալ վառվիմ սիրով քո, և որդւոյդ, ու ցաւով խոցվիմ առանց բժշկըվելու: Ո՜վ թէ ի՛նչխստար կբաղձայի հոն գըտ-նվիլ ան տրտմալի դիպվածին, ու քեզի ընկեր ըլլայի ցաւով և լա-լով. թէ որ ան ատենը արժանի չե-

և եթէ յայնժամ ոչ արժանացայ այսմ շնորհի , գոնէ անդ արժանացայց աղաչեմ. գիտեմ ճշմարտիւ և խոստովանիմ, զի ոչ այնչափ ծանրանայր փայտ խաչին 'ի վ̅ր որդւոյդ , եթէ չէին գրեալ 'ի նմա մեղք իմ մեծամեծք և բազումք : Ապա տուր ինձ ցաւիլ ը̅ քեզ , և լալ դառնապէս զմեղս իմ. զի եղէց քեզ 'ի մխիթարութի̅ , և որդւոյդ քում 'ի թեթևացումն :

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Է:

'Ի վերայ ցաւոց տէրամօրն՝ յորժամ կայր առ խաչէն :

### ՄԱՍՆ. Ա:

ՈՎ դուք հաւատացեալք ք̅ի , ո՞ն եկա՛յք փութացո՛ւք 'ի լեառն գողգոթա , տեսանել անդ տեսիլս իմն ահեղ և զարմանալի : Ահա՛ մորենին վառեալ , և ոչ այրի : (Ելից . Գ . 2 . 3 :) Մորենին մա-

չեղա աս շնորքիս, պարէ հիմա արժանի՛ ըրէ կխնդրեմ ։

Ես ստոյգ գիտեմ ու կխոստովանիմ, որ այն խաչը անխտար չէր ծանրընար որդւոյդ վրա, թէ որ իմ շատ ու մեծ մեղքերըս վրան դրած չըլլարնէ ։ Աւրեմն տուր ինձի որ հետըդ ցաւիմ, իմ մեղքս լամ դառնապէս, որ ասով քեզի մխիթարանք ըլլամ, ու թեթևութի տամ քու որդւոյդ ։

✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻✻

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ․ Ե։

*Ե. Ծածկայ ցաւոց վրա Երբոր խաչին տակը կեցեր էր ։*

### ԱՌՋԻ ՄԱՍԸ։

Ո՛վ քո՛ւրի հաւատացեալք, եկէ՛ք վազենք երթանք գողգոթա լեռը, որ տեսնենք անտեղը մէկ սարսափելի ու զարմանալի տեսիլք մը ։ Նայէ՛ մորենին բոլորքերը ու չխայրիր կոր ։ Մարիամ

մը-

մարխամ, որ երբեմն հրով անձու-թեն վառեցաւ, տեսանի այժմ վառեալ հրով ցաւոց, և անկէզ կայ:

Օ՜ի՞նչ աղէտք են կաթողին մօր՝ իւր իսկ աչօք տեսանել զբախիւն կռանաց, որով որդին իւր բևեռի 'ի խաչ. տեսանել զմերկութի՛ն նորա յանդիման բազմամբոխ ժողովրդեան ծանօթից և թշնամեաց. տեսանել զպատառատուածս վիրաց 'ի ձեռս և յոտս, յորոց արիւն աղբերանայ. տեսանել զխախտումն բովանդակ անդամոց նո՛ր, և զմարմինն ողջոյն՝ արիւնազգեստ, և միայն յեցեալ 'ի վէրս իւր: Իսկ որ մեծն է՝ տեսանել զնա լքեալ թողեալ յամ̃ մարդկանէ. ո՛չ ոք նմին բարեխօս, և անմեղութեն վրէժխնդիր, ո՛չ ոք ապաստարար, ո՛չ ոք կարեկից. այլ ամենեցուն մի կամք և մի խորհուրդ 'ի սպանումն միաբանեալ: Իբրև պարագլուխ անօրինաց՝ 'ի մէջ երկուց աւազակաց կանգնեալ. իբրև անիծապարտ յօրինացն՝ ը̃ երկինս և ը̃ երկիր առ-

կառ

մորենին որ առաջ ա̅ծուն հրովը վառեցաւ, հիմա կըտեսնենք ցաւոց հրովը վառերէ, ու առանց երելու կեցերէ ։

Ի՞նչ կսկիծ է սիրական մօրմը՝ իր աչքով տեսնէ չէքիճներուն զարնելը, որով իր որդին խաչին վրայ կգամեն. տեսնէ անոր մերկուիը այնքան բազմուն առջև ծանօթներուն ու թշնամիներուն. տեսնէ պատառուածքը ձեռաց ու ոտից, որոնցմէ արունը աղբիւրի պէս կըվազէ. տեսնէ բոլոր անդամները խախտած, մարմինը բոլոր արիւթաթախ, ու միայն իր խոցուածքին վրայ հաստատուած ։

Ու ասոնցմէ ա՛լ մեծը՝ տեսնէ որ ամմէնուն երես թողած, չկայ մէկ ջատագով մը ու անմեղութը վրէժ խնդրող, ո՛չ ապաստող մը, ո՛չ ցաւակցող մը. այլ ամմէնքը մէկ սիրտ մէկ միտք միաբաներեն մեռցնելու ։ Ինչպէս թէ անօրէններու գլուխ եղած ըլլար՝ երկու աւազակի մէջ տեղը կանգնեցուցերեն. ինչպէս օրէնքէն անիծած մը՝ երկն-

քի

կախեալ, ոմն թէ և ոչ միումն ար-
ժանի ։ Ընդ. այսպիսի արտաքին
տեսութեանց՝ բեր ապա և զներքին
տեսութիւնն նր, որով բմբռնէր զներ-
քին տանջանս փրկչին՝ զբանակա-
նին և զզգայութեացն · բեր և զան-
համեմատ սէր նր առ որդին իւր ·
յաւել և զանչափելի մեծվայել-
չութի խաչեցելոյն, և զմեծութի
անարգանացն՝ որ առ նա · և ապա
'ի միտ առ՝ թէ կարօղ իցես, որ
անբաւութի ցաւոց հրդեհեալ ճա-
րակեցաւ 'ի սիրտ կուսին ։ Այլ
նա 'ի վերայ այսր ամենայնի յոտն
կայ անշարժելի, և շունչ իւր առ
նմա ։

Ո՞վ սքանչելեացս · մթագնեցան
երկինք, երկիր սարսեցաւ, վէմք
պատառեցան, չհանդուրժեալք
չարչարանաց արարչին · իսկ մայրն
'ի ցաւս մահու՝ անխորժ կայ 'ի
մահուանէ · վառեալ, և ոչ այրի ։
Ապաքէն զանմահութի իմն տխրա-
կան զգեցոյց նմա ամենակալ զօ-
րութին այ · զի ոմն է որդէծնու-
թեն տարաւ զկուսութի, նոյնպէս

է

քի ու գետնի մէջ կախերեն , իբ-
րև թէ հիչ մէկին ալ արժանի չէ :
Այս դրսի տեսածներուն հետ
բեր նայէ մտքով տեսածներն ալ ,
որով սուրբ կոյսը կիմանար Յսի
փրկչին ներսի տանջանքները՝ թէ
բանական հոգւոյն , և թէ զգայ-
ութեացը . բեր անոր անչափ սէրը
իւր որդուն վրայ . բեր անհուն գե-
րազանցութիւնը խաչ ելլօղին , ու
մեծ անարգանքն որ իրեն կը լլար .
աս ամմէնէն ետքը խելք հաս-
ցուր թէ որ կրնաս նէ՝ ինչխըտար
անչափ ցաւ բորբոքեցաւ ու տա-
րածեցաւ մը կուսին սրտին մէջը :
Բայց ինք այսու ամենայնիւ ոտքի
վրայ անշարժ կեցերէ , հոգին վրայ :
Ո՛վ ինչ սքանչելիք է . երկինքը
մթնցաւ , երկիրը դողաց , քարե-
րը պատառեցան՝ չկրնալով համ-
բերել իրենց ստեղծողին չարչա-
րանացը . ու մայրը մահուան ցա-
ւու մէջ կենդանի կեցերէ . կըվա-
ռի ու չերիր : Յայտնի է որ Ած ա-
մենակարող տվաւ իրեն մէկ տրտ-
մալի անմահութի մը . որ ինչպէս
զա-

է մահառիթ ցաւոց տարցի զկեն-դանութիւն ։ Ո՞ տայր և ինձ վառիլ հրովն այնուհիկ, թէ և հասանէր ինձ այրիլ, և յաճիւն լուծանիլ ։

## ՄԱՍՆ․ Բ ։

Ոչ նուաղ յորդեցին ցաւք է լսե-լիս ս̄րյ կուսին՝ քան է տեսանե-լիս ն̄ր ։ Մերձ կացեալ ն̄ր առ խա-չին, լսէր զոր խօսէր որդին իւր, և զոր թշնամիքն խօսէին ։ Որդին վասն խաչահանուացն աղօթս առ հայր մատուցանէր, իսկ ն̄ք հայ-հոյանս և նախատինս ՚ի նա ձր-գէին ։ Զսքանչելիս նորա ՚ի սուտ հանէին․ զզօրութիւն ն̄ր ՚ի վատու-թիւն շրջէին․ և մինչ յանյուսութիւն անդամ զնա արկանել հնարէին ։ Ո՜վ լեզու հուր՝ խոցոտիչ չար ես քան զսայրասուր բևեռս խաչին․ զի սոքօք զմարմինն՝ իսկ լեզուաւ զհոգի փրկչին կարեվէր խոցոտե-ցին ։

Իսկ արդ՝ ո՞ր ցաւք և մորմոքումն ոչ զեղան ՚ի սիրտ կուսին, լսելով

զայս

փաւակ բերելուն հետը կուսութիւն ալ պահեց, այնպէս ալ մահաբեր ցաւոց հետը կենդանութիւն ալ պահէ ։ Ո՞ւր էր որ ես ալ բողբոջէի ան կրակովը, թէ և երէի մըկէի, ու մոխիր դառնայի ։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ։

Սուրբ կոյսը պակաս ցաւ չքաշեց ականջովը՝ ինչ խոսար որ աչքով ։ Աչքին քով կեցեր՝ կը լսէր թէ որդուն խօսածը, թէ թշնամիներուն խօսածը ։ Որդին աղօթք կընէր հօր Աստուծոյ խաչողներուն համար ․ ու անոնք հայհոյանք նախատինք կը թափէին վրան ․ անոր հրաշքները սուտ կը սեպէին, կարողութիւնը փուճ կը դնէին ․ ինչվան յուսահատութեն մէջ ալ կուգէին ձգել ։ Ո՛վ լեզու կրակ ու բոց՝ որ աւելի սաստիկ կլոցէր՝ քան թէ խաչին գամերը ․ ինչու որ անոնք մարմինը միայն ծակեցին, բայց լեզուն չարաչար ծակծըկեց Յիսուսի հոգին ։

Հիմա ինչ ցաւ ու կսկիծ չտիրեց

զայս ամ։ Եթէ 'ի լսել նոր զբանս հրաշալի անօրէնութե որդւոյն՝ պահէր զած, և խելամուտ լինէր 'ի սրտի իւրում, (Ղուկ. Բ. 19.) ո՞չ ապաքէն և զբանս Թշնամանացն 'ի սիրտ իւր ընկալեալ, խելամուտ լինէր զօրութե նց. և 'ի միտ առնոյր՝ թէ ած որ անկեաց լեզու 'ի մարդ, ծանակի 'ի նոցանէ, և հայհոյի փոխանակ փառաբանութե։

Ամենահամբերն յոբ ժուժկալեաց արդարև կորստեան ընչից և որդւոց, համբեր որդանցն և շարաւոյն. այլ ընդ բանս Թշնամանացն ողորմելի հառաչէր, թէ քնար եղէ մարդկան, և ծիծաղին զինև յետինք։ (Է. 1. 9։) Ապա զո՞ր հառաչանս արձակէր մր. կոյսն, լուեալ թէ ածորդին իւր ո՛չ միայն 'ի հրէական դասէն ծանակի, այլ և 'ի պատժակից իւր աւազակէն։

Ո խա՞րդ 'ի հոգի խոցեցաւ դարձեալ, լուեալ զծարաւին գոչել իւրոյ միածնին, զոր կուսական կաթամբն սնոյց. որոյ գետք՝ և աղբիւրք՝ և սահմանք երկնից՝ նր են

Տր. կուսին սիրտը՝ լսելով աս բա-
ները ։ Իսկ որ ուրիշ ք͞ի տնօրէ-
նու͞է բաները լսած ժամանակը՝
ամէնը միտք կըպահէր , ու սըր-
տին մէջ կըքննէր կիմանար , մի-
թէ նախատանաց խօսքերը սիր-
տը չէ՞ր մի առներ , չէ՞ր իմանար
անոնց միտքը . ու կտեսնէր որ ա͞ծ
որ մարդու լեզուն տվերէ, անոնց-
մէ ծաղր կըլլայ, հայհոյանք կըն-
դունի օրհնութ͞ե տեղը ։

Մեծ համբերողը Յոբ. համբե-
րեց կորսնցնել բոլոր ունեցածը
ու զաւակները . համբերեց որդե-
րուն ու թարախոտ վէրքերուն .
բայց նախատական խօսաց վրա
սաստիկ կըհառաչէր՝ թէ մարդ-
կանց սազ մը եղայ , ու էն ցած
մարդիկքները վրաս կըխնտան ։
Հապա ի՞նչ հառաչանքներ կհա-
նէր Տր. կոյսը , լսելով թէ իր ա͞ծ-
որդին ծաղր կըլլայ չէ՛ թէ միայն
հրէից ազգէն, հապա հետը խաչ-
ված աւազակէն ալ ։

Ինչպէս սրտի խոց ալ ունեցաւ
Տր. կոյսը՝ երբոր լսեց ծարաւ եմ

են արարածք ։ Կաթիլ մի ջրոյ ոչ մատուցաւ այնմ, որ յանջրդւոջ արբոյց իէ՟լեանցն զջուր 'ի վիմէ ․ և սակայն ոչ պակասեաց քացախ է՟ լեղւոյ՝ յառաւելութ՟ի ցաւոց որդւոյն և մօրն ։

## ՄԱՍՆ․ Գ։

Դ՝առն էր սե՞յ կուսին և կարեվէր՝ ամե՞ն զոր տեսանէր, և զոր լսէր առ խաչին ․ այլ ոչինչ այնպ՟ս դղրդեցոյց զանձն նր՟, ո՟պ լսել՝ թէ և հայրն երկնաւոր եթող զորդի իւր ։ Փրկիչն մեր՝ որ յայլ տանջանս իւր լուռ եւեթ կայր, միայն զթողանալն 'ի հօրէ ողորմագին գոչմամբ բայածանոյց ։ Ապա զիա՞րդ աղէխարշել մղձկեցաւ սե՞ք կոյսն է՟ այս թողանալ, որում և թեթև ցաւք որդւոյն կսկծեցուցիչք էին և վիրաւորիչ ։ Ալէտանջիւր 'ի խորհուրդս սրտին և ասէր ․ ցայդ վայր հասեր

ո՞վ

կանչելը իւր միածին որդուն , որ կուսական կաթով մեծցուցերէր , և անոր ստեղծածն էին գետերը , աղբիւրները, երկնքի հեղեղները ։ Կաթ մը ջուր չիտվին անոր՝ որ չոր անապատին մէջ իսրայէլացւոց ջուր խմցուց քարէն բխած ․ բայց քացախ ու լեղի գտնվեցաւ՝ որ որդուն ալ մօրն ալ ցաւը մեծնայ ։

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ ։

Դառն ու վիրաւորօղ էր ո՞ր կուսին՝ ինչ որ կտեսնէր ու կլսէր խաչչին տակը ․ բայց հիչ մէկը անխըտար վերև ներքև չըրաւ իրեն հոգին , ինչխըտար լսելը թէ Հայր ած ալ թողուց իւր որդին ։ Փրկիչն որ այլ տանջանքները լռութե կտանէր , միայն հօր աստուածմէ թողվիլը ողորմուկ ձանով յայտնեց ։ Տես թէ ինչպէս հապա ո՞ր կուսին ալքը խաչեցաւ այն թողվելուն վրա , որ ալ թեթև ցաւերը որդւոյն՝ իրեն կսկիծ ու վէրք կուտային ։

Արտին մէջ մտմտուքով կըծփար՝

Ո՞վ որդեակ քաղցրիկ. ահա թո-ղին զքեզ մարդիկ՝ որք երախտա-պարտք էին առ քեզ. թողին ըզ-քեզ ծանօթք քո և բարեկամք. թողին զքեզ և աշակերտքն, որք յառաջն ցանգ ը̃ քեզ կային ՚ի փորձութի̃ս. իսկ դու այնու քա-ջալերս տայիր անձին, թէ չեմ միայն. զի հայր ը̃ իս է: (Յովհ. ժզ. 32:) Սակայն ահա և նա ե-թող զքեզ անքննելին խորհրդով: Ո՞վ հայր երկնաւոր՝ հայրդ ա̃մ մխիթարութե̃. դու ասէիր մար-գարէիւն, եթէ մոռանայցէ կին զմանուկ իւր, սակայն ես ոչ մո-ռացայց զքեզ: (Եսայ. խթ. 15:) Եւ այժմ ես մայրս ոչ մոռացայ, և ոչ թողի զորդեակս իմ. իսկ դու թողեր անմխիթար, մատնե-ցեր զսիրելիդ անձին քո ՚ի ձեռս թշնամեաց իւրոց: Րա՞բէ, ՚ի լե-րինն թաբօր զհաճեցայն բարբա-ռէիր. իսկ ՚ի լեառնս գողգոթա՝ թողուլ լսեմ: Կամիս ուրեմն, զի յիմ վ̃ր հեղցին ա̃մ ծննդականս ցաւք. և որպէս փոխան երկրաւոր հօրն

կըսէր , ո՛վ անուշիկ զաւակս , սու-
խըրտար եղար որ՝ մարդիք որ քեզի
պարտըկան էին՝ թողուցին ։ քու
ձանչվորները բարեկամները քեզի
թողուցին ։ աշակերտներդ ալ
թողուցին , որ առաջ միշտ հետըդ
կըգտնվէին նեղութենց ժամանա-
կը ։ բայց քեզ մխիթարանք կու-
տայիր , ըսելով թէ մինակ չեմ ,
հայրը իմ հետս է ։ Սակայն հիմա
հայրն ալ քեզ թողուց , որ խելք
չիհասնելու բան է ։

Ո՛վ հայր երկնաւոր , ո՛վ ած իմ
մխիթարութե , դու եսայի մար-
գարէին բերնովը կըսէիր , թէ որ
մայրը մոռնայ իր տղան , բայց ես
քեզ չեմ մոռնար ։ Հիմա ես մայրս
չիմոռցայ չիթողուցի իմ որդիս ։
իսկ դուն թողուցիր անմխիթար ,
քու սիրելիդ մատնեցիր թշնա-
մեաց ձեռքը ։ Ա՛խ վա՛խ , թաբօր
լեռան վրայ՝ հաճեցայ կըկանչէիր
իրեն ։ իսկ հոս գողգոթա լեռան
վրայ թող տալ կըլսեմ ։ Ի՞նանկ
է նէ՝ կուզես որ ծնողական ցաւե-
րը բոլոր իմ վրաս լեցվին ։ ու ինչ-

Հօրն ես միայն վշտանամ, կամիս՝ զի և փոխան երկնաւոր Հօրդ ես վշտակից եղէց. այո՛ ես եղէց փոխանակ անվշտանալի քո բնութեանդ ։ Եւ արդ՝ ո՞վ անձն իմ տառապեալ, Հայեա՛ց և տե՛ս իբրև կաթսայ յեռանդման ցաւոց զսիրտ սրբոյ մօրն. տե՛ս՝ զի գերանդի արդարութեան Աստուծոյ թռուցեալ հարկանէ ոչ միայն զորդին ՚ի խաչին, այլ և զմայրն առ նմին ։ Որդին է պատկեր մօրն ՚ի բնութե, իսկ մայրն պատկեր որդւոյն ՚ի ցաւսն ։ Ընդ որդին թողաւ անմխիթար ՚ի Հօրէ, նոյնպէս և մայրն, և երկոքին ընկլեան յանդունդս ցաւոց ։ Արդ՝ մի՛ թէ և դու թողուցո՞ւս զնոսա անմխիթար ։

## Աղօթք ։

Ո՛վ ամենասուրբ մայր վշտագին՝ աղբիւր անսպառ ցաւոց և անձկութեանց. ապաքէն և ՚ի ցաւս քո եղեր աղբիւր կնքեալ. զորոյ զկնիք ոչ ոք՝ բայց որդիդ քո միայն կա-

րօղ

պէս մարմնաւոր հօր տեղը ես կը-
չարչարվիմ նէ, կամիս որ երկնա-
ւոր հօրդ տեղն ալ ես ցաւակից
ըլլամ․ բարի՛ է, քու անչարչարե-
լի բնութեդ տեղը ես կը լեցնեմ ։
Հիմա ով ողորմելի անձն իմ,
նայէ՛ տես որ ո՞ր մօրը սիրտը խալ-
կինի պէս ցաւով կեփի կոր․ ու
ո՞յ արդարութ̃ մանգաղը շարժեր
կը զարնէ կոր չէ՛ միայն որդին խա-
չին վրա, հապա մայրն ալ հետը ։
Որդին մօրը պատկերքն է բնութ̃
կողմանէ, մայրը պատկերք եղաւ
որդուն ցաւոց կողմանէ․ ինչպէս
որդին անմխիթար թողվեցաւ հօր-
մէն, նմանապէս մայրը, ու եր-
կուքն ալ ընկղմեցան ցաւոց ան-
դունդի մէջ ։ Դուն ալ կուզես մի
անմխիթար թողուլ զիրենք ։

## ԱՂՕԹՔ ։

Ով ամենաս̃բ ցաւալից մայր, աղ-
բի՛ւր չհատնելու ցաւոց ու վշտաց․
իրաւցընէ քու ցաւուտ կողմանէ
ալ եղար աղբիւր մը կնքած գո-
ցած․ որու կնիքը չիկրնար ուրիշ

բող է բանալ. բայց մի՛ աղաչեմ և
առ իս լինիցիս աղբիւր կնքեալ,
չհաղորդելով՝ի քոց ցաւոցդ: Հա-
սեալ կամ առ ոտս քո՝ի հանդէս
անարիւն նահատակութեանդ. և
ցանկամ սրտառուչ փափագմամբ
ընուլ զսիրտ իմ՝ի լրութ͞է վշտաց
քոց: Այլ վա՛յ ինձ, զի փոխանակ
ցաւոց՝ ամօթով լց͞ել եմ, տեսա-
նելով՝ի քեզ և յորդիդ քո զվրէժ-
խնդրութ͞ի մեղաց իմոց: Լսեմ
զի տ͞րն իմ խաչեց͞ել գոչէ ցաւա-
գին. որդիք մօր իմոյ մարտեան
ը͞ն իս. (Երգ. ա͞. 5.) իսկ՝ի քոյդ
բերանոյ լսեմ ձայն աղիողորմ.
որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր
դու ընդ մեզ: Մի՛, մա՛յր ի͞մ, մի՛
ճմլեր զսիրտ իմ. այլ ես ինքն
խոստովան լինիմ, զի որդւոյ քում
զխաչն ես գործեցի մեղօք իմովք
և քեզ զերկուսն միահու պատրաս-
տեցի. և դատայ ես պարտաւոր
արեան ա͞յ իմոյ:

Բայց յայսմ հետէ ցանկամ յան-
ձրն իմ ը͞ունել զմահ որդւոյ քո,
և տալ զարիւն իմ ը͞ արեան ն͞ր.

եղէ

մը բանար բաց որդուդմէ ։ Բայց
կաղաչեմ որ չըլլաս ինծի ալ գո-
ցած աղբիւր , չհաղորդելով զիս
քու ցաւոցդ ։ Սուրբ եկեր հասեր
եմ , որ տեսնեմ քու առանց ար-
եան մարտիրոսութիւնը ․ ու կըփա-
փաքիմ բոլոր կամօքս՝ որ սիրտս
լեցնես քու ցաւոց առատութէն ։
Բայց վա՜յ ինծի , որ ցաւոց տեղը
ամօթով լեցված եմ , տեսնելով
քու վրաս և որդւոյդ վրա իմ մե-
ղացս պատիժը ․ կըսեմ որ խաչեն
Տէրս ցաւով կաղաղակէ՝ Մօրըս
ղա-կընները հերըս կոտրեցան ․ քու
բերնէդ ալ կըսեմ խղճալի ձայն
մը ․ Ո՛րդէ , ալ ի՞նչ բան ըրէր դու-
ճեղէ ։ Մ՛ի մա՛յր ՚նը , մի՛ ձմլեր սիր-
տըս կաղաչեմ ․ ես ինծմէ կխոս-
տովանիմ որ որդւոյդ խաչը ես չի-
նեցի մեղքովըս ․ քեզի մահուան
ցաւ պատրաստեցի ․ ու եղայ պար-
տըկան արեան իմ ստեղծողիս ։
Բայց ասկէ ետքը կըաղձամ , որ-
դոյդ մահը ես վրաս առնեմ , ու
տամ իմ արուններս իրեն արեան
տեղը ․ աս գողգոթա լեռը ըլլայ

եղիցի ինձ վայր բնակութեան և ապաստանի այս լեառն գողգոթա. աստ ծնայ ցաւօք քո յորդիութիւն քեզ. աստ կեցից և մեռայց առ ոտս քո:

**********************

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ. Զ:

'Ի վերայ ցաւոց ամենասուրբ կուսին՝ ընդ խոցումն կողին որդւոյն, և ընդ իջուցանելն 'ի խաչէն:

### ՄԱՍՆ. Ա:

Աղաղակեաց Յիսուս 'ի ձայն մեծ, և եհան զոգի: Ահա կայ մայրն, և տեսանէ զնա զրկեալ 'ի կենացն՝ զոր ետ նմա: Ճաշակ իմն մահու է՝ տեսանել մօր զմահ որդւոյ, թէպէտ և յանկողինս հանգստեան դիպեսցի այն: Ապա զո՞ր տագնապ մահու կրեաց կոյսն մարիամ, տեսեալ զորդի իւր անշնչանալ մահու անարգութեան 'ի խաչի՝ իբր բռնութեամբ իմն և աղաղակաւ: Յարուցեալքն 'ի նմանէ

շըր-

ընծի ընակարան ու ապաստան ։ Հոս ծնայ ցաւով քեզի որդի, հոս ապրիմ ու մեռնիմ քու ոտիցդ տակը ։

✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ· Զ։

Սէ կուսին ցաւոյը Վրա՝ որ ունեցաւ Յ̄ի կողը խոցելուն համար, ու խաչէն իջեցնելուն ժամանակը ։

### ԱՌՋԻ ՄԱՍԸ։

Աղաղակեց Յ̄ս ամուր ձանով ու հոգին տուաւ ։ Հո՛ն կեցերէ մայրը, կտեսնէ զանի զրկըված այն կեանքէն՝ որ տվերէր իրեն ։ Մեռնելու համը առնելու պէս է՛ երբ մայրը աչքով տեսնէ որդոյն մեռնիլը, թէ՛ և մահճի մէջ հանգիստ կերպով հանգիպի ։ Հապա ի՞նչ մահուան կսկիծ քաշեց կոյսն Մարիամ, տեսնելով որ իր որդին հոգի կուտայ անարգ խաչի վրա՝ մեծ ուժով ու կանչելով ։

շրջին յառողջութե̅ն . արժանաւորքն
մահու՝ ՚ի կեանս վայելեն . և ա-
մենեցուն կենդանատուն ը̅ մահ-
ուամբ անկեղ դնի . Թառամեալ
ոչ̃ ծաղիկ, չորացեալ ոչ̃ խեցի .
համակ նուաղել և հալել որպէս
մոմ ՚ի հրոյ տանջանաց ։ Նոյլ ո՞վ
աղէտից . իբրև թէ յոլովագոյն
մահու էր պարտաւոր բնաւին ան-
պարտն, ո՛չ շատ համարեցան սպա-
նօղք նր̃ զմիանգամ մեռանելն ,
այլ երկրորդ անգամ զմահացու-
ցիչ ձեռսն ՚ի նա ձգեցին , տիգաւ
պատառեալ զս̃ծայրն կողսն , և
մինչ ՚ի սիրտն անցուցեալ ։ Նոյն
տեղ չգիտեմ զո՛յր սիրտ առաւել
փեռեկեաց, զյ̃ի՞ն , թէ զմարիա-
մուն . խոցումն ՚ի մարմնի որդւոյն
ընկալեալ, իսկ ցաւն ՚ի սիրտ մօրն
թափանցել . և այնպէս ուր վախ-
ճան առեն ցաւք որդւոյն , անդ
մօրն առաւել զօրացան . և որ փա-
փաքէր մահակից լինել որդւոյն ,
՚ի կեանս պահեցաւ առ ՚ի զմնա-
ցուածս ցաւոցն ժառանգելոյ ։
Ո՞ւմ նմանեցուցից զքեզ դո՛ւստր
սիո-

լով ։ Անոր ողջնցուցածները ողջ առողջ կըքալեն , մահուան արժանիները իրենց կեանքը կվայելեն ․ ու ամմէնուն կեանք տւօղը մեռած ընկերէ, ծաղկի պէս թռառած , խեցիի պէս ցամքած , բոլոր քաշված , մոմի պէս հալած տանջանաց կրակովը ։

Բայց ալ մեծ ողբալի բան մը , որ անմեղին Յոն ինչպէս թէ շատ մահվան պարտըկան եղած ըլլար, սպաննօղները հերիք չսեպեցին մէկ անգամ մեռնիլը , հապա երկրորդ հեղ ալ իրենց մահաբեր ձեռքը երկնցուցին՝ տէգով (նիզակով) պատռելով Ածային կողը , ու ինչվան սիրտը խոթեցին ։ Ան տէգը չէմ գիտեր որու սիրտը աւելի պատռեց՝ Յսինը թէ Մարիամու ․ խոցը որդոյն մարմնոյն վրայ եղաւ , բայց ցաւը մօրը սիրտը մտաւ ․ ուստի ան ատեն որ որդոյն ցաւերը վերջացան նէ , մօրը ցաւերը աւելի շատցան ․ ու ինք որ կբաղձար որդոյն հետը մեռնիլ , կենդանի պահվեցաւ որ մնացած

ցաւը

սիոնի․ մի՛թէ որդւո՞յդ քում չար-
չարելոյ․ և զիա՞րդ ապա նա մե-
ռեալ, և դու կենդանի․ խորշե-
ցա՛ւ 'ի քէն մահ, զի բռնագոյն
քան զինքն ետես զցաւս հոգւոյ
քո։

## ՄԱՍՆ․ Բ։

Այն՝ որ ինքնիշխան զօրութ͞բ խո-նարհեցոյց զերկինս և էջ, տեսա-ւ ձեռնտուութ͞բ մարդոյ իջանել 'ի խաչէն։ Ո՜վ զիա՛րդ կողկողե-ցան աչք կուսին 'ի տեսանել զբա-զուկս որդւոյն ընդարմացեալս, որ գօսացելոց ձեռաց զբժշկութիւն ետ․ 'ի տեսանելն զանշարժութ͞ի ոտից նորա, որ զկաղս գնացոյց․ տեսանել զկափուցումն աչացն՝ որ զկոյրս լուսաւորեաց․ և զբովան-դակ մարմնոյն լուծումն, որ լու-ծելոց անդամոց զհաստատութ͞ի պարգևեաց։ Այսպիսում վշտա-կիր մարմնոյ զի՞նչ այլ տեղի էր վայելչական, բայց եթէ սիրապա-տար գիրկ ամենավիշտ մօրն․ զի

պարտ

ցաւը ժառանգէ ։ Որո՞ւ նմանցը-
նեմ զքեզ ով սիոնի զաւակը ․ քու
չարչարված որդոյդ ըսեմ նէ, հա-
սա ինչ է որ ան մեռած է, ու
դուն կենդանի ես ․ մահը քեզմէն
փախաւ՝ տեսնելով որ հոգուդ ցա-
ւերը աւելի ուժով են քան զինքը ։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ։

Ան որ իւր կարողութը երկինքը
ցածցուց ու ինջաւ, տեսնես որ
մարդու ձեռքով խաչէն վար կիջ-
նի կոր ։ Ո՛վ թէ ինչպէս կողկողե-
ցան նը կուսին աչքերը՝ երբոր տե-
սաւ որդոյն թեւերը թուլցած, որ
չորցած ձեռքերը բժշկերեր ․ երբ-
որ տեսաւ ոտքերը անշարժ, որ
կաղերուն քալել տվերեր ․ երբոր
տեսաւ աչքերը գոցված, որ կուրե-
րը լուսաւորերեր ․ ու բոլոր մար-
մինը քակված, որ անդամալուծ-
ներուն պնդութի տվերեր ։ Ասանկ
չարչըրկած մարմնոյ ուրիշ յարմար
տեղ կրնա՞ր մի ըլլար՝ բայց եթէ
ցաւալից սիրական մօրը գիրկը ․
որովհետեւ պէտք է որ տեղը ու
տե-

պարտ է լինել համեմատութե ընդ-
տեղլին և ը եւտեղական :

Փրկիչն մեր՝ յամէ զոր ունէր յերկրաւորացս, միայն զբազմաչարչար մարմինն եթող մօր իւրում: Ով արդար փոխատրութես . զհոգին բանական՝ քանզի 'ի հօրէ ունէր, դարձել հօր աւանդեաց . իսկ զմարմինն 'ի կուսէն ունելով, անդրէն 'ի նա դարձոյց : Իաբէ ցաւալի փոխատրութես . զորպիսի մարմին ընկալաւ 'ի կուսէն , և զորպիսի հատուցանէ նմա : Նորա նութի իմն էր կուսին՝ յորժամ զնորածինն իւր մանուկ 'ի գիրկսն պնդել խանդաղատէր . իսկ այժմ գործի տանջանաց եղև նմա , և նշան անարիւն նահատակութե նր : 'Ի ծնանել իւրում զնա՝ ոչ հոգին եղև նմին գործակից 'ի մարմնոյն կազմութի . իսկ այժմ ձեռք անօրինաց եղծին զբովանդակ վայելչութի նորա :

Ով ամենավիշտ կոյս , մի՛ յանդըգնութի թուիցի աղաչեմ հարցանել . ընդէ՞ր զգեցուցեր որդւոյ

քում

տեղաւորածը՝ մէկ մէկու յարմար
ըլլան ։

Փրկիչն մեր ինչ որ աշխարքէս բան մը ունէր, ամենցմէ միայն մարմինը թողուց իր մօրը ։ Ինչ արդար հատուցումն է. որովհետեւ ինչպէս բանական հոգին հօր աստուծմէ ունենալով՝ անոր աւանդեց, նմանապէս մարմինը՝ որ կուսէն ունենալով՝ անոր դարձուց ։ Բայց ի՞նչ ցաւալի հատուցումն եղաւ, որպէսի մարմին առաւ որ կուսէն, ու որպիսի մարմին կը հատուցանէ կոր ։ Առաջ երջանկութի մըն էր կուսին՝ երբոր իւր նորածին որդին գիրկը կառնէր կըթալկտէր վրան. բայց հիմա տանջուելու գործիք եղաւ իրեն, ու նշան մը առանց արունի մարտիրոսութեր ։ Ծնանելու ժամանակը հոգին որ իրեն գործակից եղաւ մարմինը ձեւացնելու. հիմա անօրէններուն ձեռքը աւրեց անոր բոլոր գեղեցկութիւնը ։

Ով վշտալից կոյս, յանդգնութի չըլլայ հարցնելս, ինչո՞ւ տանիլ

չար

քում մարմինն չարչարելի և կրա-ւոր, որով այս երաշխեալք վճարաց անցին ընդ նա և ընդ քեզ։ Մ. ԱԼ աւա՛ղ, լսեմ պատասխանի. ընդ-է՞ր և դու յանցեար մեղս մեծա-մեծս, որոյ վն հարկ եղև որդւոյ իմում մարմինն առնուլ չարչարե-լի, և մատնել զնոյն 'ի տանջանս առ 'ի քաւելոյ զմեղս քո, և փրկ-կելոյ զքեզ 'ի յաւիտենից տան-ջանաց։

## ՄԱՍՆ. Գ։

Փրկիչն մեր իջուցաւ արդարև 'ի փայտակերտ խաչէն, այլ անդա-դոյն ևս բևեռեցաւ 'ի կենդանի խաչն Մարիամ, այնչափ բևեռօք՝ որչափ վէրք կային 'ի մարմնի նր։ Յառաջնումն խաչեալն միայն ըզ-գայր զցաւսն, և ոչ խաչն. իսկ յայսմ ընդհակառակն՝ խաչեալն զգայ ինչ ոչ բնաւ. այլ ամենայն ցաւք ժողովեցան 'ի խաչն. և այն-պէս միանգամայն նա ինքն կոյսն եղև խաչ, և խաչեալ. խաչ՝ որդ-ւոյն,

չարչարվելու կրական մարմնին որ_
վեր որդոյդ, որ այսքան կսկիծ
վիշտ եղաւ անոր ալ, քեզի ալ ։
Վայ ինծի, որ պատասխանի կը_
լլեմ, Հապա դու ինչո՞ւ այնքան
մեծամեծ մեղք գործեցիր, որ ան
պատճառով պէտք եղաւ որդոյս
չարչարվելու մարմին առնու, ու
տանջանքի մտանէ, որ քաւէ քու
մեղքերդ, ու ազատէ քեզ յաւի_
տենական տանջանքէն ։

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ։

Թէպէտ մեր փրկիչը վար առին
փայտէ խաչէն, բայց աւելի ամուր
դամվեցաւ կենդանի խաչին վրայ՝
սուրբ կուսին, այնքան դամերով
ինչխտոտար վերք որ կար մարմնոյն
վրա ։ Ս.ռջինին՝ խաչ եղողը միայն
կիմանար ցաւը, ոչ թէ խաչը․
բայց հոս անոր ներհակ՝ խաչվա_
ծը հէչ ցաւ չիզգար․ այլ ամմէն
ցաւերը խաչին վրա ժողվեցան․
անանկ որ ինքը սբ կոյսը եղաւ
խաչ, ու խաչուած․ խաչ եղաւ

որ_

ւոյն , և խաչեալ՝ յորդին ։
Կամիս ով անձն իմ գտանել ըզ-
ցաւալից մայրն . մի այլուր խնդ-
րեր զնա՝ բայց 'ի վերս որդւոյն .
անդ արար նա իւր դադար ը՟ հո-
վանեաւ վիմին . (Երգոց . բ՟ . 14 .)
ը՟ ամենայն վերս որդւոյն եղանէ
և մտանէ , և յա՟մի ճարակ ցաւոց
գտանէ ։ Սիրտ նորա կայ յանդա-
դար բախումն իբրև զսալ դարբ-
նաց . և յամենայն կողմանց սուրք
խորհրդոց մտացն հարկանեն զնա
անմխիթար թախծութբ՟ ։ Միակ
մխիթարութի՟ սրտի նր՟ էր որդին
իւր . և ահա նոյն դարձաւ նմա 'ի
տանջանս ։ Եւ որ յոյս բժշկուե՟
կայցէ հիւանդին , յորժամ դեղն
իսկ լիցի նր՟ ախտիցն պատճառ ։
Ապա յիրաւի ձայնէ լալագին առ
ամենայն անցաւորս ճանապարհի
աշխարհիս ։ * Զե՛զ ասեմ , ձե՛զ
ասեմ , դարձա՛յք հայեցարո՛ւք՝ և
տեսէ՛ք , թէ իցէ՞ն երբէք ցաւք
ը՟ ցաւոց լեալ ։ ‖ (Ողբ . ա՟ . 12 ։)
Ո հայելն միայն ազդէ , և զայլ
ինչ չյաւելու . զի գիտէ՝ թէ ան-
հնար

որդոյն , խաչուած որդոյն վրան : Կուզե՞ս ո՞վ անձն իմ գտնել զաւակից մայրը . ուրիշ տեղ մի՛ փընտուեր՝ այլ որդոյն վիրաց մէջ . Հոն իրեն տեղ դադար շինեց վիմին շուքի տակը . որդոյն վիրաց մէջը կելլէ կըմտնէ , ու ամմէն տեղ ցաւու կերակուր կգտնէ : Իրեն սիրտը անդադար կըզարնէ դաբիններու սալի ( եօրսէ ) պէս . ու ամմէն կողմէ մոմոուքի սուրերը կըծակծկեն անմխիթար տրտմութենով : Մէկիկ մխիթարանքը իրեն սրտին՝ որդին էր , ու հիմա ան եղաւ իրեն տանջանք : Ո՞նչ յոյս կրնայ հիւանդի մը առողջանալու՝ երբոր բուն դեղը իրեն հիւանդութե՟ պատճառ ըլլայ : Ասոր համար իրաւցընէ կըկանչէ լալով ամմէն աշխարքի անցւորներուն . * Ձեզի՛ կըսեմ , ձեզի՛ կըսեմ , դարձէ՛ք նայեցէ՛ք տեսէ՛ք թէ հիչ եղա՞ծ է ցաւ մը իմ ցաւոցս նման : || Լալը միայն կուզէ , ուրիշ բան չըսեր . գիտնալով որ անկարելի է թէ մէկմը

նայի

հնար է միանգամ հայել 'ի նա , և ո՛չ աղէտանալ 'ի ցաւս նո՛ր , կամ ոչ խոստովանել` թէ չեղև երբեք և չլինիցի այլ ցաւ հաւասար նորայոցն :

## Աղօթք :

Այո՛` մա՛յր ցաւոց և տրտմութե՛ , ո՛չ ոք է որ ոչ խոստովանեսցի , թէ անզուգականք են ցաւք քո · այլ աւա՜ղ , զի սակաւք են` որք հայիցին 'ի քեզ մտադիւր խոկմամբ : Այլ մեծ ևս ցաւ է ինձ , զի և ես մի եմ յառաւել հեղգացելոցն · ուր 'ի պատճառս ցաւոց քոց ես ինքն եղէ յառաջադէմ և պարտաւոր : Մ`ինչև ցե՞րբ լինիմ առ քեզ խստասիրտ և աննուէ՞ր` ո՞վ արժանիդ ամենայն ցաւակցութե · մինչև ցե՞րբ ձևանամ հրէշ զարհուրելի , կրելով զանուն որդւոյ , և սիրտ` գազանի · հա՛րկ է` կա՛մ զանուն իմ փոխել , կամ զսիրտս : Այլ մի՛ աղաչեմ , մի՛ փոխեր ըզհրեշտակաց ըղձալի անունս , այլ փոխեա՛ զսիրտ իմ , մանաւանդ

Թէ

նայի իրեն, ու անոր ցաւովը չի տրորի • կմ չխոստովանի թէ ոչ եղերէ, ոչ պիտի ըլլայ իրեն ցաւոցը հաւասար ։

## Աղօթք ։

Այնպէս է ով մայր ցաւոց և տրտմութե՛ , չիկայ մարդ որ չճանչնայ թէ աննման է քու ցաւըդ • բայց ափսոս որ քիչ մարդ կընայի վրադ սրտանց մտածելով ։ Ու աւելի մեծ ցաւ է ինծի՝ որ անհոգներուն մէկն ալ ես եմ • անխիղճ քեզի ցաւ տուօղներուն գլխաւորը ու պարտըկանը ես եղայ ։ Ինչվան երբ դէպ քեզ ասանկ խստասիրտ ու անողորմ կըլլամ ով ամմէն ցաւակցութե՛ արժանի • ինչվան երբ զարհուրելի ցուցանք մը կեընամ, որդոյ անուն ունենալով, ու գազանի սիրտ • կամ անունըս փոխվելու է , կամ սիրտըս ։

Բայց չըլլա՛յ աղաչեմ, մի՛ փոխեր հրեշտակաց բաղձալի անունըս , հապա իմ սիրտըս փոխէ՛ , մանա֊

թէ փոխարկեամ զնա ընդ քումդ սրտի․ կաթիլ մի քոց ցաւոց բաւական է ինձ․ ցօղեա՛ զնոյն 'ի սիրտ իմ, և վաղվաղակի փոխադարձցի յանօթ ցաւոց։ Եւ թէ ոչ 'ի յանդգնութեն գրեսցի հայցուածս, մատո՛ առ իս աղաչեմ զորդիդ քո՝ զվիրաւորեալն առ սէր իմ, զի և ես փարեցայց զնովա անյագ փափագմամբ․ լուացից արտասուօք զարիւն վիրաց նորա․ հալեցայց ցաւօք նր․ և մեռայց 'ի նմ․ ո՜վ զի և զհոգի իմ ընկալցիս ընդ նմա 'ի գիրկս փառաւոր մեծութե քո։

✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕✕

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ․ Է։

'Ի վերայ ցաւոց ամենասրբոյ կուսին ընդ Խաչելութն միածնի որդւոյ։

### ՄԱՍՆ․ Ա։

Ծով զբաղմութիւն ջուրց անուշից յինքն ընդունելով, զնոյն յիւր ներգոյացել դառնութե յեղաշրջէ․ և անձն վշտալից՝ թէ

և

ւանդ քու սրտիդ հետը փոխանց ըրէ . մէկ կաթ մը քու ցաւուս ինծի կօգտէ , կաթեցուր սրտիս վրայ , ու խակոյն ցաւոց անման մը կրդաւոնայ : Ու թէ որ ծանր չե-րևայ խնդիրքս , տուր ինծի կա-ղաչեմ քու սիրելի որդիդ՝ որ իմ սիրուս վիրաւորվեցաւ , որ ես ալ պլլովիմ վրան անյագ փափաքով արցունքովս լուանամ իրեն վի-րաց աղոտնը . հալիմ իրեն կսկի-ծովը . ու վրան մեռնիմ , որ ետքը իմ հոգիս ալ իր հետը քու փա-ռաւոր գիրկըտ ընդունիս :

**********************

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆ . Է :

ՍԷ հրաշէն ցաւոց վրայ՝ որ ունեցաւ եար Միածնէն թաղման պատճառով :

### ԱՌԱՋԻ ՄԱՍԸ :

Ծովը ինչխստար շատ անուշ ջրեր ընդունի նէ , բոլոր իր բնական աղիութիւնը կփոխէ . ասանկ ալ վշտալից անձ մը ուրա-

և ուրախալեաց իմն պատահեցի, առնու զնոյնս իւր 'ի նիւթ ցաւոց ։ Ապաքէն ուրախալի իմն էր մէջ կուսին, տեսանել՝ թէ զտան ոմանք, որք խնամ ունիցին թաղման որդւոյ իւրոյ, և փառօք ամփոփեսցեն զնա 'ի դիր հանգըստեան ։ Այլ միթէ հնար էր 'ի ծովահանգոյն դառնութե̃ սրտի նր̃ մխիթարութեան իմն տեղի գտանել ։

Ոմտաւ ածէր, թէ 'ի սպանումն որդւոյ իւրոյ՝ գրեթէ ամենայն աշխարհն միաբանեալ էր յամենայն ազգէ և 'ի կարգէ ․ իսկ 'ի թաղումն նր̃ հազիւ մի և երկու ոմանք գտան յառաջամիտք ․ ոչ թէ որդի իւր արժանի էր մահու, այլ ոչ և թաղելոյ ։ Տեսանէր՝ զի ազատն 'ի մեռեալս իմնկօք պատի առ'ի պահելոյ յապականութենէ, ոչ թէ ըստ պարտեաց էր նորա մեռանելն, և ընդ օրէնօք մահու էր կապեալ այն՝ որ զչորեքօրեայն կենդանացոյց, և կենդանատեղծել կարող է զն̃մ զհողացեալ ընու-

խալի քանի ալ համդըրվի նէ , ի-
րեն ցաւի նիւթ կդարձնէ ։ Իրաւ-
որ ուրախանալու բան մը էր նոր
կուսին , երբ տեսաւ որ մէկ քանի
հոգի գտնվեցան՝ որ հոգ տանին
թաղեն իր որդին , ու փառաւորա-
պէս պատեն , գերեզմանը դնեն ։
Բայց ի՞նչ կարելի էր , որ սրտին
մէջ ծովու նման ալիքուի ունենա-
լով՝ մխիթարանքի տեղ ըլլայ ։
Կըմտածէր թէ իր որդին մեռցը-
նելու՝ գրեթէ բոլոր աշխարք մէկ
եղերէր ամմէն ազգէ ու կարգէ ·
բայց թաղելու Ճորով մէկ երկու
հոգի սիրտ ըրին · ինտոր թէ իր
որդին մեռնելու արժանի էր ,
բայց թաղվելու չէ՛ ։ Կըտեսնէր որ
մեռելոց մէջ ազատը՝ խունկերով
կըպատեն որ փտութէ պահվի ,
ինչպէս թէ պարտք էր իրեն մեռ-
նիլը , ու մահուան իշխանութե
տակը ընկած ըլլար , ան որ չորս
օրվան մեռածը ղազարոս ողջըն-
ցուց , ու կարող է ողջնցնել բոլոր
հող կտրած մարդիքը ։ Կըտեսնէր
էն ետքը , ( ո՜վ մահաբեր տեսիլք )

բնութիս ։ Տեսանէր ապա ( ո՛վ մա-
հաւթիթ տեսիլ, ) զի ձեռօք արա-
րածոց իւրոց հանգուցաւ 'ի տա-
պանի, և բարձաւ 'ի նմանէ ան-
կշռելի գանձ սրտի իւրոյ ։

Պատճառադոյն քան զմահ՝ զբաժա-
նումն սիրելեաց աստացին՝ որք մի-
անգամ զփորձն ճաշակեցին ․ և
եթէ ամենայն ցաւ՝ գործ է բա-
ժանման, և բաժանումն է ըստ
միաւորութե, որ միաւորութիւն
հաւաստարեսցի բնաւ այնմ՝ որ է
մէջ յոգի և մարմնու ․ և ո՛ր բա-
ժանումն՝ բաժանմանն նոցա 'ի մի-
մեանց ․ ապա և ո՛չ մի ինչ ցաւ՝ որ
հաւաստարեսցի այսմ ցաւոյ կու-
սին ։

Ո՛վ դուք յովսէփ և նիկոդեմոս,
որք բարեպաշտեցայք 'ի տրն ձեր
և 'ի փրկիչն ․ եթէ վշտացելոյ մօրն
մխիթարութի ինչ կամէիք մատու-
ցանել, պարտ էր ձեզ՝ կամ տա-
նմա թողուլ զորդեակն իւր, և
կամ զնա ևս ընդ որդւոյն հան-
գուցանել ․ վասն զի ընտրելի էր
նմա ը̅ որդւոյն կալ 'ի գերեզմա-
նի,

որ իր ստեղծուածոց ձեռքովը գե-
րեզման դրվեցաւ . ու անով իր
սրտին անգին գանձը ձեռքէն
ելաւ ։

Որչան զմահը աւելի կսկծալի կը-
սեպեն սիրելեաց մէկ մէկէ բաժ-
նըվիլը՝ ով որ համը առերէ նէ .
ամմէն ցաւ ալ մէկ բաժնըվելէ
մը առաջ կուգայ . բաժնըվիլին ալ
միաւորութեր համեմատ կըլլայ ։
Ասանկ է նէ , կա՞յ մէկ միաւորութի
մը որ հաւասար ըլլայ՝ ինչ որ Յս՟
և Մարիամ ունէին . կա՞յ մի բա-
ժանում մը ինչպէս անոնց բաժա-
նումը . ուրեմն և ոչ ցաւ մը կըր-
նայ ըլլար՝ որ հաւասարի աս ցա-
ւուս մօր կուսին ։

Ով դուք Յովսէփ և Նիկոդեմոս ,
որք ձեր Տէրը ու փրկիչը մեծա-
րեցիք . թէ որ յաւտըլից մօրն ալ
կուզէիք մխիթարանք մը տալ նէ ,
պէտք էր կամ քովը թողուիք իր
զաւակը , կամ ինքն ալ որդուն հե-
տը հանգչեցնէիք . վասն զի աւե-
լի կընտրէր որդուն հետ գերեզ-
մանի մէջը կենալ , քան թէ ա-

նի, քան առանց Նորա բնականալ ՚ի դրախտին փափկութե։ Այլ աւա՜ղ, գերեզմանն փակեցաւ։

## ՄԱՍՆ· Բ։

Երեկոյացաւ օրն, մութն գիշերոյն ստիպեաց զցաւագին մայրն մեկնիլ գնալ ՚ի գերեզմանէ անտի։ Ահա և խաւարն յաւելու նմ ցաւս. և ոչ ներէ գոնէ ՚ի գերեզմանի անդ իբր ՚ի հայելւոջ նկատել զորդեակ իւր. գնայր և հեռանայր անտի. բայց մագնիս սիրոյն յետս ընդդէմ ձգէր զնա առ սիրելին իւր։ Ո՛վ զի՞նչ իցէ տեսիլս՝ արժանի ողորմանալոյ. տեսանեմ զկենդանի զոմն, զի գնայ առանց սրտի. վ՜ զի անդ եթող զսիրտն, ուր գանձ իւր ծածկեցաւ։ Արդարև մեծամեծս արար է նա հզօրն՝ որպէս ՚ի գերազանցութե պարգևաց, նոյնպէս յառաւելութե ցաւոց. զի բնապէս անհնար էր նմ մեկնիլ յորդւոյն՝ առանց մեկնելոյ հոգւոյ նորա ՚ի մար-

ռանց անոր փափկութե՛ն դրախտը
բնակիլ ։ Բայց ի՞նչ շահ , գերեզ-
մանը փակվեցաւ ։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ։

Օրը իրիկուն եղաւ , գիշերվան մութը կարտորցնէր՝ որ ցաւալից մայրը ելլէ երթայ գերեզմանէն ։ Տե՛ս որ խաւարն ալ անոր ցաւը կաւելցնէ . չի թողուր կոր պարէ գերեզմանին վրայով ինչպէս մէկ հայելիի մէջ նայի իր զաւակը ։ Կերթար կհեռանար անկէց , բայց սիրոյ մագնիսը (Փոխաբերաբար) զինք ետ կըքաշէր դէպ 'ի սիրելին ։ Ա՜ ի՞նչ տեսիլք է զարմանալու արժանի , որ կտեսնեմ մէկ կենդանի մը կըքալէ կոր առանց սրտի . որովհետեւ հոն թողուց իր սիրտը , ուր որ իւր գանձը ծածկվեցաւ ։ Իրաւ որ շատ մեծ բաներ ըրաւ ամենակարողն ա̃ծ սուրբ կուսին՝ ինչպէս գերազանց պարգեւաց կողմանէ , այնպէս ալ սաստիկ ցաւոց կողմանէ ։ Ա̃ զի բնական կեր-

մարմնոյն ։ Այլ արդ զոր օրինակ հայրն երկնաւոր եթող զորդի իւր, նոյն զօրացոյց զկոյս մայրն՝ թողուլ մարմնով զորդեակն իւր. զի անմեղայն կարգեալքն վն քնի 'ի լրումն աւարտեսցին. և պատարագն մարխամու ամիւ կատարեալ լիցի. վն քաջութե խորհրդով ուծացաւ յորդւոյն՝ իբրև ոչ յիւրմէ ։ ( Յովբ. լթ. 16 ։ )

## ՄԱՍՆ. Դ ։

Որ ես արդ երեւիս. ժողովեալ լալականս. առ զողբս քո և սուգ. * Ո խնրդ զաստաւ նստաւ մնացեալ քաղաքն բազմաժողով. և եղև իբրև այրի լցեալ տրտմութբ ։ ( ա. 1 ։ ) Ով դերապարտոս րակեց միայնութե սէնյ կուսին, յորժամ նստաւ մնացեալ 'ի տան իւրում. յորժամ ընդ այրութեն զչափ էառ և զանզաւակութեն ։ * Նալով ելաց 'ի գիշերի. և արտասուք իւր 'ի վերայ ծնօտից իւրոց ։

պով անկարելի էր իր որդունմէ բաժնըվիլը, ինչպան որ իր հոգին ալ մարմինէն չիբաժնըվէր: Բայց ինչպէս հայրն ամ Թողուց իւր որդին, անանկ ալ զօրացուց սուրբ կոյսը՝ որ մարմնով Թողու իր զաւակը. որ ինչ որ սահմանված էր Քնի մէ բոլորը կատարվի. ու սբ կուսին պատարագը ամէն բանով լման ըլլայ. ուստի մենծ սրտով հեռացաւ որդունմէն՝ անանկ որ իրմէն ծնած չըլլար:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍԸ:

Ո՜ւր ես հիմա Երեմիա, ժողվէ բեր լալկանները, ան քու ողբերգ ու ըսէ. Ի՞նչպէս զարմնեցա- նստաւ մինակուկ բազմամարդ քաղաքը, եղաւ ինչպէս մէկ այրի մը ժողովուրդէ լեցված: Ո՞վ ողբալի մինակութի սբ կուսին՝ երբոր նստաւ մինաւորիկ տանը մէջ. երբոր այրիուէը վրա անզաւակ ալ մնաց:

Լալով լացաւ գիշերը, ու իւր արցունքը ծնօտին վրա: Ո՞վ սեւումութ գիշեր, կանչելս կուգայ յոբ նահա-

րոց ։ ‖ ( Անդ. 2 ։ ) Որ գիշեր ցաւա-
գին, գոչեցից արդեօք և ես Տէր յու-
բայ. * Խաւարեսցի գիշերն այն ...
մի՛ եղիցի յաւուրս տարւոյ. և մի՛
թուեսցի յաւուրս ամսոց ։ ‖ ( Գ.
4. 6 ։ ) Ի այն գիշեր էր՝ յորում
ուրախութիւն երկնի և երկրի Աստուա-
ծամայրն՝ կայր լցեալ տրտմութեամբ,
աղբիւրացեալ արտասուօք, զորոց
զդառնութիւն ճաշակէր՝ և ոչ զմխի-
թարութիւն. մինչ զի արտասուքն
զտեղի առնուին 'ի վերայ ծնօտիցն.
և անտի դարձեալ 'ի սիրտն զեղա-
նէին՝ առ 'ի վերստին բղխելոյ ։
Ո՜վ զիա՛րդ նստաւ միայնացեալ, և
ոչ ոք գտաւ մխիթարիչ յայնմ ա-
ւուր 'ի սիրելեաց իւրոց. և միթէ
կա՞ր էր ումեք մխիթարել զնա,
ուր Աստուածորդին իւր էր նորա տան-
ջանք, յորմէ զրկեցաւ ։ Ապաքէն
ստիպիմ ասել, թէ զո՛ր օրինակ
որդի նորա էջ հոգւով 'ի դժոխս
ներքինս առ արդարոցն երանութիւն,
ընդ հակառակն մայրն ընկղմեցաւ
հոգւով 'ի ցաւս դժոխոց, զրկեալ
յամենափափաքելի որդւոյն, և

յան

պետին հետ ․ Թո՛ղ խաւարէ՛ ան գե-
շերը , չերգոնուի՛ փառաւոր օրերու մէջը ,
ու չհամբուրուի՛ ամառու օրերու մէջ ։ Ո՜ւ
զի ան գիշերն էր՝ որ երկնից և
երկրի ուրախութի ՛մը տիրամայրը
տրտմութ՟ լեցված էր ․ արցունքը
աղբիւր եղեր էր , որոնց աղխու-
թ՟իր միայն կառնէր՝ ոչ թէ մխի-
թարանքը ․ որովհետև արցունքը
ծնօտքին վրայ կըկենային , ու ան-
կից ալ սիրտը կլեցվէին որ նո-
րանց դուրս ըխեն ։

Ո՛վ թէ ինչպէս մինակուկ նստե-
րէր , ու չիգտվեցաւ մխիթարող
մը իրեն սիրելեացմէ ։ Բայց կըր-
նա՞ր մի մարդ մխիթարել զինքը՝
երբոր իր ՞ծորդին իրեն տան-
ջանք եղերէր զրկըվելով անկից ։
Ըսել մի կուզայ՝ թէ ինչպէս իւր
որդին իջաւ հոգւովը ներքին դը-
ժոխքը արդարները երանացնե-
լու համար , անոր ներհակ մայրն
ալ հոգւովը իջաւ դժոխոց ցաւու
մը մէջ , զրկըված ամենասիրական
որդունմէ , անմխիթար տրտմութե
մէջ թաղված ։ Ուստի աւելի կսկե-
ծով

յանմխիթար թախծութեն վարա-
կեալ: Ա՛յ աղետալի ես ք՛ զյա-
կոբ գոչէր ՚ի սրտի. * Իջից ես առ-
վլին սգաւոր առ որդի իմ ՚ի դժոխս :
( Ծննդ. լէ. 35:) Ո՞ն եկայք և
մեք զի ընդ նմա իջցուք ՚ի դժոխս ,
հաղորդեալք ցաւոց և տրտմութե-
նր. մայր է մեր , զիա՞րդ ժուժկի-
ցեմք որդիքս՝ անմխիթար թողուլ
զնա , կամ միայնակ ՚ի ցաւս. այլ
պատառեսցուք զսիրտս. կոծ մի-
ծնի առցուք. զտրտմակիցն լինել
նմա՝ համարեսցուք մեզ յարդա-
րութիւն և ՚ի մխիթարութիւն :

## Աղօթք :

Ո՜վ ամենահզօր տաճար սրբու-
թեան , և քաղաք այ տիրամայր.
զիա՞րդ տեսանեմ զքեզ լեալ տա-
ճար աւերածի , և իբր լքեալ քա-
ղաք. ՚ի հիացումն կարգեաց զքեզ
բարձրեալն , և ՚ի շշնջիւն իմ աշ-
խարհի. ո՞չ զի որ միանգամ լսի-
ցէ , հնչեն երկոքին ականջք նր :
Այլ իմ երանի թէ դղրդէին և
երկոքին աչքս , և բխէին հոսանս

ար

ծով քան զյակոբ նահապետը կը-
գոչէր սրտին մէջ, Ա.» սուգ-գոչով էջ-
նամ ես որդւոյս քով դժոխքը ։

Տէ՞ր, եկէ՛ք մենք ալ հետը լինինք
դժոխք, մասնակից ըլլալով իր
ցաւոցը և տրտմութե․ մեր մայրն
է, ի՞նչպէս սրտերնիս կըտանի որ
զինքը անմխիթար թողունք մի-
նակ ցաւոց մէջ․ այլ պատռտենք
մեր սիրտը, մէկհատիկի մահուան
մը ընենք․ անոր ցաւակից ըլլա-
լը արդարութի սեպենք մեզի ու
մխիթարանք ։

## Աղօթք ։

Ո՜վ հիանալու տաճար սրբութե
և ով քաղաք Տէրամայր, կըտես-
նեմ քեզ որ եղերես աւրած տա-
ճարի մը պէս, ու երեսէ թողած
քաղաք մը ։ Մէկ զարմանք մը
ըրաւ զքեզ Ա.ծ, ու զրուցք մը բո-
լոր աշխարքի, անանկ որ լսողին
երկու ականջը կըթնտայ ։ Երանի՛
էր՝ որ իմին երկու աչքս ալ թըն-
տար ու արցունքի հեղեղ թափէր

քու

արտասուաց 'ի վ՜ր քո , և վ՜ն քո ,
և ը՜ն քեզ ։ Ո՛վ , օտարացաւ սիրտ
իմ յինէն զհետ սրտի քո ․ Թալ-
կանամ՝ յորժամ զմտաւ ածեմ
զմիայնութիդ քո՝ առանց ամենասի-
րելի որդւոյդ ․ տռչորիմ , յիշատա-
կեալ զհեղեղս արտասուաց քոց ։
Միտք իմ յիմարին , յորժամ ըզ-
տագնապ խորհրդոց քոց զմտաւ
ածեմ ։ Սարսիմ բովանդակ ոսկե-
րօքս 'ի խորհիլ իմում , թէ ընկ-
լար յանդունդս ցաւոց՝ առանց
քոց յանցանաց ։

Արդ՝ միթէ իրա՞ւ ինչ իցէ՝ պար-
տաւորելոյս բիւր չարեօք կալ ան-
ցաւ և անվէր ․ մի՛ այդպէս տխրա-
մայր կոյս ․ ո՛չ հաճոյացի ինձ
սիրտ իմ , մինչև ոչ տեսից զնա
բևեռեալ 'ի խաչ ցաւոց քոց ․ ա-
հա մատուցանեմ զնոյն քեզ ․ ըն-
կա՛լ , և սրբասնեղ ձեռօքդ բևե-
ռեա՛ զնա , զի մեռցի՛ , և թաղես-
ցի՛ 'ի խորս վշտաց քոց ․ մինչև յա-
րիցէ ընդ որդւոյդ քում յանտր-
տում 'ի կեանս ։ Ամէն ։

քու վրաատ, քեզի համար, ու քու
հետըդ ։ Ո՛վ, սիրտըս ելաւ գնաց
ինծմէն քու սրտիդ ետեւանց. կը-
մարմրիմ մտածելով մինակուիդ
առանց ամենասիրելի որդոյդ.
կայրիմ յիշելով քու արցունքի
հեղեղը ։ Խելքս կերթայ՝ երբոր
միտք կբերեմ քու մտաց ծփումը ։
Բոլոր ոսկորներըս կդողան՝ մըտ-
մտալով որ ցաւոց անդունդք ին-
կար առանց քու յանցանքին ։
Ինմա արժա՞ն է որ ես բիւր մեղ-
քի պարտըկանս առանց ցաւու-
ըլլամ, առանց խոցի. չէ՛ այդպէս
Կո՛յս տիրամայր, սիրտըս հաճոյ
չըլլար ինծի՝ ինչվան չիտեսնեմ
զան քու ցաւոց խաչին վրայ գամ-
ված ։ Ահա հրամանոցդ կուտամ,
մը, ու 'նը մաքուր ձեռքովդ գա-
մէ՛, որ մեռնի ու թաղվի քու վշ-
տացդ խորը. ինչվան որ յարութե
անէ որդոյդ հետ միշտ ուրախա-
լի կենաց մէջ ։ Ամէն ։

Աղօթք ինչ հաղորդութենէ յառաջ ոք Ա.ծածնին :

Առաւել հաճոյական պաշտօն ընծայեմք մեր կուսին, յորժամ 'ի ցաւակցութե վշտաց նր քաղեա_ ցուք պտուղս հոգւորս, և առնի_ ցեմք կրթութիս ինչ բարի գործոց. յորոց զոմանս նշանակեսցուք առ իւրաքանչիւր մտածութիս :

Յառաջին հաղորդութեն :

Եթէ 'ի ժամանակի ուրախութե գիպեսցի ցաւալի ինչ, ընդունել սիրով, և հպատակութբ ածային կամաց :

Առ հրաման վերնագունից կամ ծնողաց՝ թէ և ծանր թուիցի, յօժարութբ խոնարհիլ, և զյանդգն մանութիս յանձն առնուլ : Ի կի_ րակէի, ընթեռնուլ գլուխս ինչ 'ի նր Աւետարանէն :

Յերկր հաղորդութեն :

Եթէ 'ի բռնութե թշնամեաց պա_ տահեսցի օտարութի, կամ փա_ խուստ,

## Բանի մը պտուղ մեր Աստուածածնայ ցաւոց մտածութիւնը ։

Աւելի հաճոյ ծառայութի՛ն կ'ըլլայ մեր Յիսուսին, երբոր իրեն ցաւակցութեն հոգևոր պտուղներ քաղենք, և բարի կրթութիւներ ընենք․ որոնց մէկ քանիին ըսենք ամմէն մէկ մտածութեր ։

### Առջի մտածութեն ։

Թէ որ ուրախութե առեն ցաւալի բան մը պատահինէ, սիրով ընդունինլ, հնազանդելով Աստուծոյ կամացը ։

Մեծաւորաց կամ ծնողաց հրամանն մը՝ ծանր ալ ըլլայնէ, սրտանց մտիկ ընել, ու յանդիմանութիւր անձ առնուլ ։

Կիրակի օր, մէկ քանի գլուխ մեր Աւետարանէն կարդալ ։

### Երկրորդ մտածութեն ։

Թշնամեաց ներուքէ թէ որ հանդիպի զարկպուն մը, կամ փախչիլ, կամ

խուստ, կամ այլ վիշտք, տանիլ համբերութեամբ :

Ի մէջ օտարաց, կամ անհաւատից, կամ վատթար արանց՝ պահել վարս պարկեշտս, և մի՛ հետևիլ անկարգութեան նոցա :

Յերկուշաբաթի, մի՛ հեղգանալ յուսումն, և յայլ կարգեալ գործս:

## Յերրորդ մտածութիւն :

Յորժամ պատահիցի կորուստ ազնիւ կամ սիրելի իրաց, մի՛ կորուսանել զհամբերութիւն :

Զգուշանալ զաւակաց, զի մի՛ կենցաղավարեսցեն ընդ անծանօթ և անկիրթ մարդոց :

Յերեքշաբթի, զսպել զլեզու յաւելորդ և ՚ի ծաղրական բանից :

## Ի չորրորդ մտածութիւն :

Զրպարտութեանց և չարախօսութեանց համբերել, և ոչ փոխարէն չարախօսել :

Զարարարաց բարիս հատուցանել, առանց ոխս պահելոյ :

Դ. շաբթի, ողորմութիւն առնել աղքատի,

կը ուրիշ նեղութի, համբերու-
թենով քաշել ։

Օտարաց մէջ, կամ անհաւատ-ներու, կը գէշ մարդկանց, պար-կեշտ վարք պահել, անոնց ան-կարգութենը չիհետեւիլ ։

Երկուշաբթի, ծոյլ չըլլալ կար-գալու, կը ուրիշ ունեցած գործքի

## Երրորդ Մտածութիւն ։

Րղէկ կը սիրական բան մը կոր-սըվինէ, համբերութիւը չիկորսնցը-նել ։

Տղոց վրա աչք բանալ՝ որ չիճանչ-ցած կամ անշահ մարդկանց հետ չիվարին ։

Իրեք շաբթի, լեզուն բռնել փուճ ումուճ կը ծիծաղելու խօսքերէ ։

## Չորրորդ Մտածութիւն ։

Փուխտանի կը էվլէլպակաս խօս-քերու համբերել, անոնց դէմը չար չիխօսիլ ։

Չարիք ընօղներուն բարիք հա-տուցանել, սիրտը ոխ չիպահել ։

Չորեք շբ. ողորմութի տալ աղքա-տի,

տի, կմ՟ այց առնել հիւանդաց ։

Ի հինգերորդ ժամուն ։

Ուանր վշտաց կամ հիւանդութե֊
տանիլ համբերութբ՟ ։
Սուաձել զմասնաւոր ախտ, կմ՟
զչար սովորութի ։
Ի հնգշբթի, վշտացելոց մխի֊
թարութն մատուցանել ։

Ի վեցերորդ ժամուն ։

Եթէ պատահիցի մահ որդւոյ,
կամ այլ սիրելւոյ, մի անհամ֊
բերութբ՟ ողբալ ։
Պատրաստել զանձն ՚ի մահ, և
փափաքել երանելի տեսոյն այ՟ ։
Յուրբաթու, Ճնշումն ինչ մարմ֊
նոյ առնել ՚ի կերակուրս, և յայլ
ախորժելիս ։

Յեօթներորդ ժամուն ։

Համբերութբ՟ գոհանալ՝ յորժամ
՚ի վիշտս անմխիթար լինիցիմք ։
Առանձնանալ զժամանակ մի յըն֊
կերուէ վն՟ հոգևոր մտածուեց ։
Ի շաբաթու, մասնաւոր բարիս
առնել վասն ննջեցելոց ։

տի, կը հիվանդաց տես երթալ:

## Հինգերորդ մտածութիւն:

Ծանր վիշտ մը կը հիվանդութեան համբերութենով տանիլ:

Յատուկ ախտ մը, կամ չար սովորութիւն մը կոտրել:

Հինգշաբթի, նեղած կը տրտմած մարդկանց մխիթարանք տալ:

## Վեցերորդ մտածութիւն:

Թէ որ մեռնիլ պատահի զարկի, կը ուրիշ սիրականի մը, անհամբերութեամբ չիլալ չիծեծկըրվիլ:

Մահուան պատրաստութիւն տեսնել, ու քաղձալ Ք.Ի քաղցր տեսոյն:

Ուրբաթ, մարմնաւոր ձգնութիւն մը ընել կերակրի կողմանէ, կը ուրիշ ախորժած բանի:

## Եօթներորդ մտածութիւն:

Համբերութեամբ գոհութիւն տալ երբ վշտաց մէջ անմխիթար ըլլանք:

Քիչ մը ատեն քաշվիլ ընկերաց մէ՝ հոգևոր մտածմունք ընելու:

Շաբաթ, յատուկ բարի գործք ընել մեռելոց համար: